

## ԱՄԵՐԻԿԱՅԻ ՎԵՐԱՔՆՆԻՉ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ՝ ԸՆԴԴԵՄ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ԺԻՏՄԱՆ

Միացեալ Նահանգներու դատական վերաքննիչ ատենանք որոշում կայացուց ընդդէմ Հայոց Ցեղասպանութիւնը ժխտողներուն: Մասաչուսեթս նահանգի վերաքննիչ դատարանը հաստատեց առաջին ատենանի դատարանի վճիռը, որու համաձայն կը մերժուէր նահանգի դպրոցական ծրագրերուն մէջ Հայոց Ցեղասպանութիւնը ժխտող գրականութիւն ընդգրկելու պահանջը, որ ներկայացուած էր Ամերիկայի թրքահայ միութիւններու համագումարին կողմէ: Թուրքերը դատարան դիմելով կը փորձէին տապալել Մասաչուսեթս նահանգի հանրային դպրոցներէն ներս Հայոց Ցեղասպանութեան անվտանգութիւնը: Այս նպատակը իրագործելու

Շաբ.ը էջ 5

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՋ ՌՈՒՍԱՍՏԱՆԵԱՆ ՌԱԶՄԱԿԱՅԱՆԻ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐԸ ՊԱՏՐԱՍՏ Է ՍՏՈՐԱԳՐՈՒԹԵԱՆ

Օգոստոս 17-ին հրապարակուեցաւ Հայաստանի մէջ ռուսական ռազմակայանի տեղակայման ժամկէտը երկարաձգելու վերաբերեալ արձանագրութեան նախագիծը, որու ստորագրութիւնը նախատեսուած է շաբթուայ ընթացքին Ռուսաստանի նախագահ Տմիլդրի Մետվետեւի Երեւան կատարելիք պետական այցի ընթացքին: Ռուսաստանի Դաշնութեան եւ Հայաստանի Հանրապետութեան միջեւ Հայաստանի Հանրապետութեան տարածքին ռուսաստանեան ռազմակայանի մասին 1995 թուականի Մարտի 16-ի Պայմանագրին մէջ կատարուած փոփոխութիւններուն համաձայն, Ռուսաստանեան ռազմակայանը Հայաստանի Հանրապետութեան տարածքին գտնուելու ժամանակաշրջանին բացի Ռուսաստանի Դաշնութեան շահերու պաշտպանութեան գործա-



Ռոյթներու իրականացումը, Հայաստանի Հանրապետութեան Զինուած Ուժերու հետ միատեղ պիտի ապահովէ Հայաստանի Հանրապետութեան անվտանգութիւնը: Այս նպատակը իրագործելու

Շաբ.ը էջ 5

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՋ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԻ ՀՆՉԱԿԵԱՆ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԲԱՆԱԿՈՒՄԸ



Հնչակեան Երիտասարդական բանակումի մասնակիցները Ծիծեռնակաբերդի Եղեռնի Յուշարձանին մօտ

Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան կուսակցութեան աշխարհասփիւռ կառույցներից շուրջ 200 երիտասարդներ՝ միանալով Հայաստանի «Սարգիս Տխրունի» ռուսանողական-երիտասարդական միութեան իրենց ընկերներին, Օգոստոսի 3-ից 8-ը «Հայրենեաց հողի կանչով» բանակում անցկացրեցին Հայաստանում: Բացման հանդիսաւոր արարողութիւնը տեղի ունեցաւ Եռաբլուրում, որտեղ ՄԴՀԿ ղեկավարութիւնն ու բանակումի մասնակից երիտասարդները ծաղիկներ դրեցին Հայրենիքի ազատագրման համար ընկած ազատամարտիկների գերեզմանին: Այնուհետեւ ելույթներով հանդէս եկան ՄԴՀԿ Կենտրոնական վարչութեան ատենապետ Սեդրակ Աճեմեանը, Կենտրոնական վարչութեան անդամ Վահան Շիրիանեանը, ՄԴՀԿ Հայաստանի վարչութեան ատենապետ Գէորգ Պերկուպերկեանը, վարչութեան անդամ, ԱԺ պատգամաւոր վարդան Խաչատրեանը, ովքեր իրենց խօսքում բանակումի համար ժամանած երիտասարդներին կոչ արեցին իրենց գործով արժանի լինել այն հերոսներին, ովքեր կեանքը չխնայեցին Արցախի ազատագրման համար: Եռաբլուրից բանակումի մասնակիցները մեկնեցին բանակավայր, որտեղ, Հայաստանի եւ Հնչակեան կուսակցութեան Դրօշների բարձրացումից յետոյ յայտարարուեց բանակումի մեկնարկը: Բանակումի ընթացքում Հնչակեան երիտասարդները կազմակերպեցին բազմաթիւ արշաւ-

Շաբ.ը էջ 4

## ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ Ս.Դ. ՀՆՉԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ

Օրերս Երեւանում տեղի ունեցաւ Ս.Դ.Հնչակեան Կուսակցութեան Կենտրոնական Վարչութեան լիազուար Գիստ, որին մասնակցում էին նաեւ Սփիւռքի տարբեր շրջանների ներկայացուցիչներ: Քննարկուեցին Հայրենիք-Սփիւռք եւ Կուսակցութեանը վերաբերող գանձազան հարցեր: Ծանօթանալով ՄԴՀԿ Հայաստանի կազմակերպութեան 7-րդ Համագումարից յետոյ (16 Դեկտեմբեր 2009թ.) իրականացրած աշխատանքներին, Կենտրոնական Վարչութիւնը միաձայն որոշում ունեցաւ: Հայ իրականութեան առաջին ֆաղափական Կուսակցութիւնը չի կարող լինել որեւէ այլ ֆաղափական միաւորի կցորդ: Կենտրոնական Վարչութիւնը առաւել եւս մերժում է ՀԱԿ-ի ուղղակի պառակտողական միջամտութիւնը Կուսակցութեան ներքին հարցերին: Ուստի, անհնարին է գտնում ՀԱԿ-ի հետ յետագայ համագործակցութիւնը ինչպէս Հայաստանում, այնպէս էլ Հայաստանից դուրս: Կենտրոնական Վարչութիւնը շեշտում է ՄԴՀԿ-ի համար կարեւորագոյն հայ-թրքական եւ Արցախի հարցի կարգաւորման խնդիրներում իշխանութեան կողմից յարուցուած գործողութիւնների եւ այդ գործընթացը սատարող ֆաղափական ուժերի հետ առկայ խորը անհամատեղելիութիւնը Կուսակցութեան Ծրագրի հետ: Ողջունելի է նաեւ ՄԴՀԿ Հայաստանի կազմակերպութեան այն համոզմունքը, ըստ որի, Հայրենիքը ամայացնող եւ ֆայթայող նգնածամից կարող է դուրս բերել միայն լիբերալ համակարգից անցումը սոցիալ-դեմոկրատականի: Անձերի փոփոխումը համակարգի պահպանման պարագայում որեւէ դրական արդիւնք տալ չի կարող, ինչն անվիճելիօրէն հաստատում է Հայաստանի վերջին 20 տարիների պատմութիւնը: ՄԴՀԿ Կենտրոնական Վարչութիւնը մէկ անգամ եւս իր գորակցութիւնն է յայտնում Հայաստանի Հնչակեան կազմակերպութեանը, ողջ Հայ ժողովրդին հաւաստիացնելով, որ իր հաւաքական ներուժը դնելու է յանուն Արցախի ամբողջական անկախութեան նախաձեռնման, Հայ Դատի արդար լուծման, Համահայկական Միասնութեան ստեղծման եւ Մայր Հայրենիքը ընկերային արդարութեան, օրինականութեան, հաւասարութեան եւ ազատութեան երկիր դարձնելու կարեւորագոյն ազգային խնդիրների իրագործման համար: Ս.Դ. Հնչակեան Կուսակցութեան Կենտրոնական Վարչութիւնը 16-08-2010 Երեւան

# ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՍԻՍ

## «ԸՆՏՐՈՒԹԵԱՆ ԱՐԱՏԱԻՈՐ ՇՐՋԱՆ»

### ՎԱՐԴԱՆՋԱԼՈՅԱՆ

Ընդդիմութեան մասին բանավեճերը չեն դադարում, չնայած ակնյայտօրէն նրա գործունէութիւնը նուազել է: Ընդդիմութեան ճամբարից յատկապէս քննադատուած է ՀԱԿ-ը եւ նրա առաջնորդ Լեւոն Տէր Պետրոսեանը: Արտայայտուած են հիմնականում ծածկուած գաղափարներ, բայց քիչ չեն ինքնատիպ եւ նորարարական մօտեցումները:

Այդ մօտեցումների մէջ ես յատկապէս կ'առանձնացնէի Ստեփան Դանիէլեանի հրապարակուածները Լրագրում: Հիմնականում կը վերաշարադրեմ նրա արտայայտած տեսակէտը, տեղ-տեղ յաւելելով իմ դիտարկումները, իսկ ապա կը փորձեմ տալ իմ սեփական կանխատեսումը:

Գրոյթ առաջին. օրինական ճանապարհով գնալով ընդդիմութիւնը յաղթել չի կարող: Այս գրոյթն ինձ ակնյայտ է թւում: Իշխանութիւնները օրինականութեան դարպասով մուտք գործելով պետական ղեկավարման ատեաններ, իրենց հետեւից դրանք պինդ փակել են: Այս բանաձեւը յայտնել է յայտնի քաղաքական փրկիստիպայ Կառլ Շմիդտը Հիտլերի իշխանութեան գալու առիթով: Մասնաւորապէս, գործող ընտրական օրէնքը որեւէ նարատրութիւն չի տալիս ընդդիմութեանը յաղթել:

Սակայն հանգամանքները կարող են փոխուել, եւ այդպիսի շանս կարող է յայտնուել: Այս դէպքում իշխանութիւնները փոխում են օրէնքներն այդ շանսը չէզոքացնելու համար: Կայ նաեւ օրէնքի կամայական մեկնաբանման ճանապարհ: Օրինակ, Հայաստանում 10 տարի բնակուելու օրէնքը մի կերպ մեկնաբանուեց Ռոբերտ Քոչարեանի դէպքում, այլ կերպ՝ Բաֆֆի Յովհաննիսեանի: Մէկ այլ օրինակ. քաղաքապետարանի ընտրութիւններում հետեւելով օրէնքի տառին եւ ոգուն, ընդդիմութիւնը շատ աւելի քիչ ձայն հաւաքեց, քան նախագահական ընտրութիւններում: Եթէ ապագայ խորհրդարանական ընտրութիւններում նոյն կերպ լի-

նի, ապա ընդդիմութիւնն էլ աւելի քիչ ձայն կը հաւաքի: Խաղի ներկայ կանոններով ընդդիմութեան համար նախատեսուած է միայն «սահմանադրական ճանապարհով» պարտուելու ուղին: Այսինքն, իշխանութիւնը գերակայ է օրէնքի նկատմամբ: Ընդդիմութիւնը կարող է յաղթել «սահմանադրական ճանապարհով», եթէ մեր երկրում օրէնքի գերակայութիւն լինի, իսկ դա, նոյնիսկ իշխանափոխութեան դէպքում, դեռ շուտ չի լինի:

Ս. Դանիէլեանը համարում է, որ ընտրութիւնները վերածուել են բեմադրութեան, որտեղ իշխանութիւնները եւ ընդդիմութիւնը խաղում են կանխորոշուած դերեր: Աւելին. դրանք դառնում են կոռուստացուած կամ քրէական տարրերի կողմից իշխանութիւնների նկատմամբ լոյսալուծութիւնը հաւաստելու գործիք: Նրանք, ովքեր մասնակցել են ընտրակեղծիքներին եւ բռնարարներին, ձեռք են բերում քաղաքական կամ տնտեսական կարիերա անելու հնարաւորութիւն: Նա առաջարկում է բոլորով ընտրութիւնները, որպէսզի իշխանութիւնը կորցնի լոյսալ կողմնակիցներ յայտնաբերելու այս հզոր միջոցը: Այս առաջարկութեան հիմնական թերութիւնն այն է, որ կան լոյսալուծիւնն ապահովելու աւելի հզոր միջոցներ, օրինակ՝ կոմպրոմատը, որ նրանք ունեն քաղաքական եւ տնտեսական համարեա բոլոր սուբիեկտների համար:

Իշխանութիւնների համար քաղաքական լոյսալութիւնն ապահովելու հիմնական միջոցը պետական, բիզնես խաւին, մշակութային գործիչներին կոռուստացնելն է, հասարակ լեզուով՝ «փշացնելը», եւ ապա շանտաժի ենթարկելը:

Երրորդ գրոյթը ընդդիմութեան սկզբունքային կոռուստացուածութեան գրոյթն է: Ամէն մի ընտրութիւններից յետոյ տեղի է ունենում վերնախաւի վերակառուցում եւ մասնաւորապէս տեղի է ունենում քաղաքական վերնախաւի մէջ նախկին ընդդիմութեան անդամների մի մասի ներգրաւում, ինչպէս դա տեղի ունեցաւ ԱԺՄ-ի, Ա. Գեղամեանի, Օրինաց Երկրի եւ այլն դէպքում: Ս. Դանի-

էլեանը կանխատեսում է, որ յաջորդ թեկնածուն ՀԱԿ-ն է: Կ'ապրենք, կը տեսնենք:

Իսկ սա նշանակում է, որ ընդդիմադիր գործիչները հասարակութեան աչքում երկիմաստ համբաւ ունեն: Նրանք կարծես պայքարում են, որպէսզի իշխանութիւնները նրանց նկատեն եւ կաշառեն: Ոչ մի առնչութիւն պետութեան եւ հասարակութեան ինդիւրների մտահոգութեան հետ, որ նրանք յայտնում են նախընտրական պայքարի ժամանակ: Զուր չէ, որ հայաստանցիների մի զգալի մասը ընտրապայքարն արհամարհաբար անուանում է «աթուակուի»: Ընդդիմութեան այդպիսի վերասերումը, ըստ իս, հետեւանք է առաջին գրոյթի՝ «ընդդիմութիւնը շանս չունի յաղթելու»:

«Ընտրութիւնների արատաւոր շրջանի» Ս. Դանիէլեանի այս տեսութիւնը համոզիչ է, տրամաբանական եւ, կարծես թէ, անհերքելի: Այն ունի մի թերութիւն. դիմադրի տեսութիւն չէ, հաշուի չի առնում ժամանակային գործունեւ արտաքին ու ներքին քաղաքական աղէտների ազդեցութիւնը:

Բայց ենթադրենք, որ գոյութիւն ունի կամ կարող է յայտնուել այնպիսի ընդդիմութիւն, որը ցանկանում է յաղթել, այլ ոչ թէ կաշառուել: Այդպիսի ընդդիմութեան գոյութիւնը կամ յայտնուելն անհնար չէ: Երկրում տնտեսական, սոցիալական, քաղաքական ճգնաժամը խորանում է ամսէ ամսի: Միջազգային կազմակերպութիւնները նշում են եւս մէկ ճգնաժամ՝ դեմոգրաֆիկը, որ ճակատագրական կարող է լինել պետութեան գոյութեան համար: Կայ նաեւ Ղարաբաղեան ինդիւրը, սակայն ես կարծում եմ, որ այն առաւելագոյնը կարող է դառնալ վերնախաւային յեղաշրջման առիթ, հետեւաբար չի կարող դառնալ կենսական ինդիւրների լուծման սկիզբ:

Այստեղից հետեւութիւն, իշխանութիւնները թողել են մի ճանապարհ ընդդիմութեան համար. լինել աւելի ռադիկալ, քան 2008-ին: Այդ ռադիկալ ուժը կարող է լինել ՀԱԿ-ը, նրա շանսերը դեռեւս մեծ են, բայց այլ ուժի ներկայութիւնը չի բացառում: Սա, իհարկէ, անցանկալի սցենար է: Բայց մինչեւ ընտրութիւններ շատ ժամանակ կայ՝ համարեա երկու տարի, եւ իշխանութիւնները կարող են այնպիսի իրավիճակ ստեղծել, երբ ընդդիմութիւնը կ'ունենայ ռէալ շանս յաղթելու իշխանութիւններին: Բայց իշխանութիւնները կարող են գնալ դրան, եթէ զգում են ապստամբութեան վտանգը: Իշխանութիւններին, մասնաւորապէս կառավարութեանը, «բզել», որ մի բան գոնէ անեն, կարող է միայն ապստամբութեան իրական սպառնալիքը: Ռ. Քոչարեանն այդ վտանգը չզգաց, եւ տեղի ունեցան յայտնի դէպքերը:

Հնարաւոր են նաեւ այլ տարբերակներ, օրինակ՝ ապստամբութեան փոխարէն տեղի ունենալ տարբարյին ժողովրդական խռովութիւն/զրոյրգական տարբերակ/ եւ այլն: «Ընտրութիւնների արատաւոր շրջանի» օրէնքը ստեղծել է «քաղաքական դասակարգը»՝ քաղաքական ակտիւիստների խաւը: Դա թոյլ է տուել նրանց յարմարաւէտ ապրել եւ գործել, առանց մեծ մտաւոր կամ ֆիզիկական ջանք գործադրելու: Քաղաքական

գործիչների տգիտութեան, ազատութեան եւ սահմանափակութեան մասին վաղուց առասպելներ են խօսուում: Այն վաղուց պարագիտային խաւ է:

Արատաւոր շրջանից, ըստ իս, հնարաւոր է դուրս գալ, եւ դրա համար հարկաւոր է դուրս գալ «քաղաքական դասակարգի» սահմաններից, հաշուի առնել նրանց շահերը, որոնք մաս չեն կազմում «քաղաքական դասակարգին»: Աւելին, այդ «դասակարգը» իրեն հիմնականում սպառել է եւ արդէն նկատելի է «նոր քաղաքական դասակարգի» ի յայտ գալը: Այդ պրոցէսները տարբեր բնոյթ ունեն ՀԱԿ-ում, ժառանգութիւնում եւ այլուր: Այս աւանդական կազմակերպութիւնների կողքին առաջանում են նոր տիպի քաղաքական սուբիեկտներ, շատ աւելի մոբիլ, աւելի դինամիկ, որոնք ունեն նաեւ նշանակալի մշակութային կապիտալ եւ գործում են աւտոնոմ՝ ինքնուրոյն: Նրանք բազմիցս ցոյց են տուել իրենց արդիւնաւէտութիւնը: Սակայն այս նոր քաղաքական սուբիեկտները վճռական դեր կարող են խաղալու ապագայ քաղաքական զարգացումներում, եթէ կարողանան կոորդինացնել իրենց գործունէութիւնը մի որեւէ զանգուածային շարժման հետ, կարողանան դուրս գալ «սոցիալական ցանցի» շրջանակներից: Այս դրական զարգացումները որոշ յույս են տալիս, որ «ընտրութիւնների արատաւոր շրջանի» օրէնքը կը յաղթահարուի:

«ԼՐԱԳԻՐ»

## ՅՈՒՆԱԾ ՈՒ ՅՈՒՆԵՑՐԱԾ

Միացնում եմ հեռուստացոյցը, մի ալիքով խօսում է արուեստաբան Հենրիկ Յովհաննիսեանը: Խելօք մտքեր է ասում, երկար՝ առանց պատկերի խօսք է: Գուցէ ռադիոյով հնարաւոր լինէր լսել, ասենք, ճաշ պատրաստելիս, երբ ձեռքերդ ու աչքերդ զբաղուած են: Մի ուրիշ ալիքով խօսում է Արտյոմ Երկանեանը՝ «Շանթի» ունիվերսալ փորձագէտն ամէն ինչի գծով: Նրա գրուցակիցը նոյնպէս «հարազատ» դէմք է՝ Նուէրը: Միւս ալիքով մի ամբողջ եռեակ է խօսում՝ Ստեփան Գրիգորեան, Ստեփան Սաֆարեան, Արտակ Զաքարեան կազմով: Թեման Ռուսաստանի հետ մեր չարաբերութիւններն են ու Մեդվեդեւի առաջիկայ այցը: Նորից փորձում են խելօք մտքեր յայտնել: Նրանց «խօսեցնողն» էլ մի 6-7 տարի եթերից մեր աչքերը «մագոլ» արած նոյն դէմքն է: Յաւալի է, բայց «երկնագոյն էկրանը» ոչ մի անակնկալ մեզ չի մատուցում: Եվ ոչ մի նոր դէմք: Ընդհանրապէս՝ երբեմն թւում է ժամանակը կանգ է առել հայկական լեռնաշխարհում: Ոչինչ չի փոխում

ոչ միայն տարէցտարի, այլեւ տասնամեակների կտրուածքով եւ անգամ դարի փոփոխութեամբ: Էկրանին ու ասպարէզում գտնուող մարդիկ մեր աչքի առաջ ծերանում են, վաղուց մեզ յայտնի մտքեր արտայայտում, խօսք ու գրոյցի թեմաներն էլ են նոյնը, հասարակութեան առաջ ծառայած ինդիւրները՝ եւս: Ինչպէ՞ս յաղթահարել այս տաղտուկը, որտեղից գտնել այն նոր խօսքը, միտքը, հայեցքը, որ կարող է բալասանի դեր խաղալ: Մեզ հանել այս ճահճից, նոր լուծումներ ու նոր շունչ հաղորդել հանրութեանը: Որտե՞ղ է այն երիտասարդ, նոր սերունդը, որ ասելիք ու անելիք ունի այս երկրում եւ որը պէտք է փոխարինի Հենրիկ Յովհաննիսեանին, Ստեփան Գրիգորեանին, Նուէր Մնացականեանին եւ միւսներին: Թե՞ մենք դատապարտուած ենք նրանց լսելու եւս 10-20 տարի, իսկ յետոյ կը գան նորերը, բայց նրանց նմանութեամբ ու կերպարով:

«ՀՐԱՊԱՐԱԿ»

**ՄԱՍԻՍ ՏԱԲԱԹԱԹԵՐԹ**

ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝  
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ԶՆՁԱԿԵԱՆ  
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ  
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ԽՄԲԱԳԻՐ՝  
ՏՕԲԹ ԱՐՇԱԿ ԳԱԶԱՆԵԱՆ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿԱԶՄ  
ԳԱՐԻԷԼ ՄՈՒՈՅԵԱՆ  
ՍԱՅԱԿ ԹՈՒԹԵԱՆ  
ՅԱՐՈՒԹ ՏԵՐ ԴԱԻԹԵԱՆ

ՎԱՐՉԱԿԱՆ ԲԱԺԻՆ  
ԼԵՆԱ ՄԱՆՈՒԿԵԱՆ  
Ֆեռ. (626) 797-7680  
Ֆաքս. (626) 797- 6863  
E-Mail: massis2@earthlink.net  
http://www.massisweekly.com

**MASSIS Weekly**  
Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA  
1060 N. Allen Ave.  
Pasadena, CA 91104  
Phone: (626) 797-7680  
Fax: (626) 797-6863  
E-Mail: massis2@earthlink.net  
http://www.massisweekly.com

(USPS 667-310) (ISSN 0744-334X)  
Published Weekly  
Except Two Weeks in August

ANNUAL SUBSCRIPTION RATES:  
USA \$50.00, Canada \$60 (Second Class), \$75.00 (Air Mail)  
Overseas \$85.00 (2nd Class Mail), \$125.00 (Air Mail).  
All payments must be made in US funds & Drawn on US banks.  
Periodicals Postage Paid at Pasadena CA.  
Please Send Address Change To  
MASSIS WEEKLY  
1060 N. Allen Ave.  
Pasadena, CA 91104

ՀԱՅԱՍՏԱՆ

ՎԱՅԱՆ ՇԻՐԻՍԱՆԵԱՆ.- «ՀԱԿԱՌՈՒՄԱԿԱՆ ՔԱՐՈՉՉՈՒԹԻՒՆԸ ԿՈՐԾԱՆԱՐԱՐ Է»

ՄԴՀԿ կենտրոնական վարչութեան անդամ, ՀՀ պաշտպանութեան նախկին փոխնախարար Վասան Շիրիսանեանն Օգոստոս 16-ին լրագրողների հետ հանդիպման ժամանակ ուրուագծեց այն հիմնական ուղղութիւնները, որոնցով, ըստ նրա, Հայաստանում քարոզչութիւն է տարւում:



ՄԴՀԿ կենտրոնական վարչութեան անդամ Վասան Շիրիսանեան

«Առաջինը՝ Հայաստանում պէտք է արեւելքի թեմերում լինեն է, թէ առանց Թուրքիայի Հայաստանը չի գարգանայ, թէ պէտք է սահմանը բացել եւ այլն: Երկրորդը՝ Արցախի խնդիր շուտափոփոխ լուծումն է՝ փոխզիջումներով, սպառնալուծումներով կարգավիճակով: Երրորդը՝ հակաբանակային գործընթացն է, իսկ չորրորդը՝ հակառուսականը, որը տարւում է ուսական ուղղութեամբ: Նրա համարում է, որ Հայաստանում իրականացնելու է «մի ամբողջական շղթայի գոհարներ, որոնց նպատակը Հայաստանը Ռուսաստանից կտրելն է, Հայաստանում Արեւմուտքի ազդեցութիւնը հաստատելը»:

Վ. Շիրիսանեանը նման գարգացումները Հայաստանի համար կործանարար է գնահատում, քանի որ Ռուսաստանն է, որը «պաշտպանում է Հայաստան-Թուրքիա

սահմանն ամբողջապէս, սպահովում է Հայաստանի անվտանգութիւնը»:

Ինչ վերաբերում է Հայաստանում ուսական ուղղութեան գործունէութեան մասին պայմանագրի ժամկետի երկարացմանը, քաղաքական գործիչն այն դրական է գնահատում, քանի որ, նրա կարծիքով՝ «պայմանագրի համաձայն՝ Ռուսաստանը պարտաւորւում է արդիականացնել Հայաստանում եղած սպառնալուծութիւնը եւ պարտաւորւում է հասցնել այնպիսի վիճակի, որ Հայաստանի դէմ ցանկացած սպառնալիք կանխուի եւ չեզոքացուի անմիջապէս»:

ՎԱՐԴԱՆ ԽԱՉԱՏՐԵԱՆ. ՌՈՒՄԱԿԱՆ ԲԱԶԱՆԵՐՆ ԻՐԵՆՑ ՊԱՇՏՊԱՆՈՒԹԵԱՆ ՏԱԿ ՊԵՏՔ Է ԱՌՆԵՆ ՆԱԵՒ ԴԱՐԱԲԱՐԸ

Հայաստանում ուսական ուղղութեամբ գործունէութիւնն առաւել ընդգրկուելու դարձնելու փաստաթղթի մէջ մեր խորին համոզմամբ պէտք է ներառուի Հայաստանի յարակից տարածքներում ՀՀ անվտանգութեանը սպառնացող զարգացումների մասին ուղղակի արտաստանական դաշնակցի պատասխանատուութեան խնդիրը, ինչը, մեր տեղեկութիւններով, առ այսօր դրուած չէ»,- նշել է Վ. Խաչատրեանն ու նկատուել, որ «միջազգայնորէն» ճանաչուած սահմանների պահպանման պատասխանատուութիւնը դուրս է դնում Արցախն ու ազատագրուած տարածքները եւ անվիճելիորէն բազմապատկուծ Ադրբեյջանի կողմից ուղղակի գործողութիւնների սանձազերծման վտանգը:



Աժ պատգամաւոր ընկ. Վարդան Խաչատրեան

«Ռուսաստանի հետ Գիւմրիի ուղղութեամբ գործունէութիւնն առաւել ընդգրկուելու դարձնելու փաստաթղթի մէջ մեր խորին համոզմամբ պէտք է ներառուի Հայաստանի յարակից տարածքներում ՀՀ անվտանգութեանը սպառնացող զարգացումների մասին ուղղակի արտաստանական դաշնակցի պատասխանատուութեան խնդիրը, ինչը, մեր տեղեկութիւններով, առ այսօր դրուած չէ»,- նշել է Վ. Խաչատրեանն ու նկատուել, որ «միջազգայնորէն» ճանաչուած սահմանների պահպանման պատասխանատուութիւնը դուրս է դնում Արցախն ու ազատագրուած տարածքները եւ անվիճելիորէն բազմապատկուծ Ադրբեյջանի կողմից ուղղակի գործողութիւնների սանձազերծման վտանգը:

«Հայկական կողմը, մեր համոզմամբ, պէտք է յաւելի համաձայնագրի տեքստը՝ ՀՀ յարակից տարածքներում վտանգաւոր գար-

գացումների դէպքում դաշնակցի պատասխանատուութեան ատիճանը: Վերջինիս բացառման դէպքում մենք ռիսկի ենք ենթարկուծ Արցախը եւ ուրուագծում ենք այն որպէս ուղղակի պոլիգոն», - ասել է նա:

Ինչ վերաբերում է ՀԱՊԿ-ից դուրս գալու եւ արեւմտեան անվտանգութեան համակարգի մէջ ինտեգրուելու մասին առաջարկներին, Վ. Խաչատրեանն ասել է. «Խիստ տարփողուած պատերազմի վտանգի պայմաններում անվտանգութեան համակարգի փոփոխութիւնը նոյնն է, թէ ձեռք բերուած զեւարճման պահին: Սա աքսիոմատիկ ճշմարտութիւն է, որի չիմացութիւնը կարող է հանգեցնել մեր

ԱԾԵԼ Է ՄԱՆԱԿՈՐ ՓՈԽԱՆՑՈՒՄՆԵՐԻ ԾԱԿԱԸ

2010 թուականի առաջին կիսամեակում բանկային համակարգի միջոցով արտասահմանից Հայաստան փոխանցուած մասնաւոր տրանսֆերտների ծաւալը կազմել է 490 միլիոն դոլար՝ 23 միլիոն դոլարով աւելի, քան նախորդ տարուայ նոյն ժամանակահատուածում:

Միեւնոյն ժամանակ, ընդհանուր գումարը՝ ներառելով առեւտրային գործարքների ֆինանսաւորումը, կազմել է 617 միլիոն դոլար եւ աճել է ընդամէնը 3 տոկոսով:

Հայաստանի առեւտրային բանկերի եւ դրամական փոխանցումների համակարգերի կողմից ստացուած տրանսֆերտների ընդհանուր ծաւալը համարժէք է առաջին կիսամեակում երկրի ՀՆԱ-ի 16.7 տոկոսին: Այս ցուցանիշը ար-

տացուում է մասնաւոր դրամական փոխանցումների կարեւորութիւնը Հայաստանի տնտեսութեան համար:

Նոյն ժամանակահատուածում Հայաստանի տնտեսական աճը կազմել է 6.7 տոկոս: Ընդ որում, տրանսֆերտների ծաւալների աւելացումը մէկն է այն գործօններից, որ դրական ազդեցութիւն են ունեցել Հայաստանի տնտեսութեան վրայ:

Մասնաւոր տրանսֆերտների աճը պայմանաւորուած է առաջին հերթին Ռուսաստանի տնտեսութեան մէջ դրական զարգացումներով: Հենց Ռուսաստանում աշխատող հարիւր հազարաւոր հայերն են սպահովում Հայաստան ուղարկուող տրանսֆերտների 70 տոկոսը:

ՍՈՒՐԵՆ ՍՈՒՐԵՆԵԱՆՅԸ ԴԱԴԱՐԵՑՆՈՒՄ Է ԱՆԴԱՍՈՒԹԻՒՆԸ «ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ» ԿՈՒՄԱԿՑՈՒԹԵԱՆ

Քաղաքականութիւնից հեռանալու մասին իր անձնական բերումը յայտարարած «Հանրապետութիւն» կուսակցութեան քաղաքականութեան ղեկավար Սուրէն Սուրէնեանը Tert.am-ի հետ զրոյցում խօսեց քաղաքականութիւնից հեռանալու իր որոշման պատճառների մասին՝ որպէս առաջին պատճառ մատնանշելով Հայաստանի քաղաքական համակարգի անկատարութիւնը: «Հայաստանում չեմ տեսնում իրական քաղաքական պայքար, մրցակցութիւն, հետեւաբար ցանկութիւն չունեմ մաս կազմել այդ յարաբերութիւններին»:



Քաղաքագետ Սուրէն Սուրէնեան

«Մենք ունենք բարեփոխուելու ցանկութիւն չունեցող իշխանութիւն եւ նոր որակ ստեղծելու կարողութիւն չունեցող ընդդիմութիւն: Այս պայմաններում քաղաքականութիւնը դառնում է իմիտացիա», - ասաց Սուրէն Սուրէնեանը:

Որպէս քաղաքականութիւնից հեռանալու երկրորդ պատճառ՝ նա նշեց հետեւեալը. «Չէի ցանկանայ, որ իմ անձի պատճառով հնարաւոր լարուածութիւն առաջանար ՀԱԿԻ եւ «Հանրապետութիւն» կուսակցութեան միջեւ, եւ գերադասել եմ զոհաբերել իմ քաղաքական յաւակութիւններն աւելի մեծ նպատակի»:

Մեզ հետ զրոյցում Սուրէնեանն ուշադրաւ յայտարարութիւն արեց՝ նշելով, թէ ինքը «զոնէ առժամանակ դադարեցնում է իր անդամութիւնը «Հանրապետութիւն» կուսակցութեանը: Մամուլում հրապարակուած այն տեղեկութեանը, թէ իր պատճառով գծուել են Լեւոն Տէր-Պետրոսեանն ու «Հանրապետութիւն» կուսակցութեան նախագահ Արամ

Սարգսեանը, Սուրէնեանն արձագանքեց. «Նման բան չկայ թէկուզ այն պատճառով, որ Արամ Սարգսեանը Հայաստանում չէ»: «Իմ քաղաքականութիւնը եւ բոլոր տեսակի ընտրութիւններում անվերապահօրէն պաշտպանելու եմ քաղաքական այն գիծը, որի դաւանողը կը լինի Արամ Սարգսեանը», - շեշտեց Սուրէն Սուրէնեանը:

Քաղաքագետը համաձայնեց, որ ստեղծուած իրավիճակի պատճառն իր հանդիպումն էր պաշտպանութեան նախարար Սէյրան Օհանեանի հետ, որը մեծ արձագանք առաջացրեց: Ըստ նրա, նման արձագանքի պատճառն այն է, որ «ունենք հիւանդ քաղաքական համակարգ»: «Այնպիսի տպաւորութիւն է, որ ես հանդիպում եմ ունեցել Ադրբեյջանի պաշտպանութեան նախարարի հետ: Նման արձագանքը միայն կարող էր հետեւել նման հանդիպմանը, սակայն այդ հանդիպումը դարձաւ այն ինդիկատորը, որը բացառապէս մեր քաղաքական համակարգի անկատարութիւնը», - ասաց Սուրէնեանը:

«ԱՄՆ-Ի ՈՒՐԱՑՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ԹՈՒՐՔԻԱՅԻՆ ԴԱՐՁՆՈՒՄ Է ՍԱՆՁԱՐՁԱԿ»

ԱՄՆ-Թուրքիա յարաբերութիւններում արձանագրուած վերջին շրջանի սրացումները հակաան ազդեցութիւն չեն ունենայ Հայ-թուրքական գործընթացի վրայ: Այս մասին NEWS.am-ի թղթակցի հետ զրոյցում ասաց Աժ «Ժառանգութիւն» խմբակցութեան ղեկավար Ստեփան Սաֆարեանը: «Հայ-թուրքական գործընթացն, ընդհանուր առմամբ, սկիզբ է առել այն հեռահար նպատակով, որ հայկական գործօնը ԱՄՆ-ի կողմից օգտագործուի՝ Թուրքիայի վրայ ճնշումներ բանեցնելու համար», - նշեց նա: Պատգամաւորի խօսքով՝ պատահական չէ, որ Հայաստան եկած ԱՄՆ պետքարտուղար Շիլաբրի Քլինթոնը, խօսելով հայ-թուրքական յարաբերութիւնների մասին, յայտարարեց, որ գնդակը Թուրքիայի դաշտում է:

«Այս յայտարարութիւնը չարուեց այն բանի համար, որ Հայաստանի պահուածքը հիացրել է ԱՄՆ-ին: Այլ այն պատճառով, որ Թուրքիան գնալով դառնում է անկառավարելի՝ տարածաշրջանային տէրութիւն դառնալու իր ամբիցիանաներով, որոնք հայէս հակադրուում են Արեւմուտքի, եւ տուեալ դէպքում՝ ԱՄՆ-ի շահերին: Եւ հետեւաբար, հայկական քաղաքարտը մշտապէս օգտագործուելու է Թուրքիային ճնշելու համար», - ընդգծեց պատգամաւորը:

«Ամէն հերթական Ապրիլի 24-ի նախօրեակին կամ վճռորոշ պահի, երբ Թուրքիային յաջողում է ԱՄՆ-ից կորզել հերթական ուրացումը հայկական ինդիքները վերաբերեալ, այդպէսով Թուրքիան դառնում է սանձարձակ ու լայիւր», - եզրափակեց Սաֆարեանը:

ԼՈՒՐԵՐ

ԱԲԴՈՒԼԼԱՅ ԳԻԼ. «ԼՂ ԽՆԴԻՐԸ ՊԵՏՔ Է ԼՈՒԾՈՒԻ ԱԴԻԲԵԶԱՆԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԱՄԲՈՂՋԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ»



Թուրքիայ նախագահ Աբդուլլահ Գիլ և Ադրբեյջանի նախագահ Իլհամ Ալիև հանդիպման ժամանակ

«Անկասկած, ԼՂ հակամարտութիւնը պէտք է կարգաւորուի Ադրբեյջանի տարածքային ամբողջականութեան շրջանակներում», - ասել է Թուրքիայի նախագահ Աբդուլլահ Գիլը Բաքուում Ադրբեյջանի նախագահ Իլհամ Ալիևի հետ համատեղ ասուլիսում:

«Մենք, իհարկէ, հայ-ադրբեյջանական յարաբերութիւնների շուրջ շատ լայն քննարկում անցկացրեցինք: Պարոն նախագահը մանրամասն բացատրեց այս պահին ստեղծուած իրավիճակը: Համոզուած եմ, որ մենք կովկասը կը վերածենք կայուն համագործակցութեան տարածաշրջանի: Այս հակամարտութիւնն այս կերպ շարունակուած է 18 տարի, եւ հետագայում այդպէս չպէտք է լինի: Իսկ դրա համար անհրաժեշտ է լուծել այս խնդիրը: Այդ նպատակով անհրաժեշտ է հանդիպումներ, քննարկումներ անցկացնել, երբեմն բաց, երբեմն էլ փակ դիւանագիտական գործունէութիւն իրականացնել: Անկասկած, ԼՂ հակամարտութիւնը պէտք է կարգաւորուի Ադրբեյջանի տարածքային ամբողջականութեան

շրջանակներում: Դա պէտք է իմանալ իւրաքանչիւր մարդ, քանի որ այլ երկրի կողմից որեւէ կերպ ՄԱԿ-ի կողմից ճանաչուած սահմանների խախտումը չի կարող ընդունուել կամ դրական համարուել միջազգային իրաւունքի տեսանկիւնից: Այս տեսանկիւնից, մենք բոլորս կը շարունակենք ամէն կերպ աջակցել այս խնդրի լուծմանը», - ասել է Աբդուլլահ Գիլը:

Ըստ նրա՝ տարածաշրջանի երկրները, բարեկամական երկրները, ինչպէս նաեւ այս տարածաշրջանի հետ պատմական կապեր պահպանող բոլոր երկրները պէտք է լինեն չափազանց ակտիւ եւ աջակցեն հակամարտութեան լուծմանը:

«Ճիշդ է այս հարցը պահել «սառեցուած» վիճակում: «Սառեցուած» հակամարտութիւնները անսպասելիօրէն կարող են վերածուել շատ մեծ խնդրի», - ասել է Գիլը եւ յաւելել, որ Թուրքիան միշտ Ադրբեյջանի կողքին է, համերաշխ է եւ կը շարունակի համերաշխ մնալ նրա հետ»:

ԹՈՒՐՔ ՆԱԽԱՐԱՐԻ ԿԱՐԾԻՔՈՎ ՅԱՅ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ՓԱԿ ՍԱՅՄԱՆԻ ՄԻԱԿ ՄԵՂԱԴՈՐԸ ՅԱՅԱՍՏԱՆՆ Է

Թուրքիայի արեւելքում գտնուող եւ Հայաստանի հետ սահմանակից Կարս ժամանած Թուրքիայի առողջապահութեան նախարարը զաւեշտալի մեկնաբանութեամբ է հանդէս եկել հայ-թուրքական սահմանի փակ լինելու կապակցութեամբ:

Թուրքական Medya73-ի փոխանցմամբ՝ Թուրքիայի առողջապահութեան նախարար Ռեշիֆ Աբդուրազիզը, Կարսում, լրագրողներից մէկի հարցին, թէ ինչո՞ւ է Հայաստանի հետ սահմանը փակ Կարսի համար, պատասխանել է. «Դուք գիտէք, որ հայ-թուրքական սահմանի փակ լինելու միակ մեղաւորը Հայաստանն է: Սահմանի բացման ուղղութեամբ Թուրքիան շատ ջանքեր է գործադրել: Յուսով եմ, որ Հայաստանը այդ ջանքերին կը պատասխանի: Հայաստանը պէտք է ստանձնած պարտականութիւնները կատարի: Այն ժամանակ էլ սահմանների բացման հարցը օրակարգ կը

գայ»-պատասխանել է Թուրք նախարարը:

Նշենք, որ Կարսի բնակչութիւնը, բացառութեամբ այտեղ բնակուող ազերիների, կողմ է առանց նախապայմանների հայ-թուրքական սահմանի բացմանը: Այնինչ, Թուրքիայի առողջապահութեան նախարարը ցոյց տուեց իր տեղեկացուածութեան ցածր աստիճանը կամ փորձեց ապատեղեկացնել Կարսի բնակչութեանը: Նա, երեւի տեղեկ է, որ Թուրքիան ստորագրելով հայ-թուրքական արձանագրութիւնները, ընդունել է առանց նախապայմանների բացել սահմանները եւ դիւանագիտական յարաբերութիւններ հաստատել, իսկ իր երկրի վարչապետ Ռեշիֆ Թայիփ էրդողանը խախտելով «առանց նախապայմանների» սկզբունքը, յայտարարում է, թէ առանց Ղարաբաղի խնդրի կարգաւորման, արձանագրութիւնները չեն վաւերացուի:

ՀՐԱՆԴ ՏԻՆՔԻ ՍՊԱՆՈՒԹԵԱՆ ԳՈՐԾՈՎ ԴԱՏԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ ԱՆՀԱՐԿԻ ԶԳԶՈՒՄ ԵՆ ԿԻԼՆ ԸՆԴՈՒՆԵԼ Է ՏԻՆՔԻ ՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՄԷՋ ԹՐՔԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏԻՈՒԹԻՒՆԸ

Ստամբուլում լոյս տեսնող «Ակօս» շաբաթաթերթի հայազգի խմբագրապետ Հրանդ Տինքի սպանութիւնից անցել է աւելի քան 3 տարի, սակայն դատական գործընթացը, «Ակօս»-ի աշխատանքը համակարգող եւ խմբագրութեան անվտանգութիւնը հսկող Գէորգ Թիւսիւլեանի կարծիքով, անհարկի ձգձգում է եւ տեղից չի շարժուած:

«Կայացած դատական 13 նիստերը գործի բացառապէս առումով շօշափելի արդիւնք մինչ օրս չեն տուել», - օրերս «Ազատութիւն» ռադիոկայանի հետ զրոյցում «Ակօսի» խմբագրութիւնում յայտարարեց Թիւսիւլեանը՝ յաւելելով, թէ Տինքի սպանութեան գործով դատավարութիւնը վերածուել է թատերական ներկայացման, այն անընդհատ յետաձգում է:

Դատական վերջին նիստը տեղի է ունեցել Յուլիսի 12-ին, նիստը յետաձգուել է մինչեւ Հոկտեմբեր: «Կատավարութեան հետ հարց ունեցող ամէն մարդու դատավարութիւնը այսպէս է անցնում դժբախտաբար», - ասում է Գէորգ Թիւսիւլեանը, - «Միայն Հրանդ Տինքի դէպքում չէ այսպէս»:

«Ակօս»-ի հայազգի խմբագրապետ Հրանդ Տինքը սպանուեց 2007 թուականի Յունուարի 19-ին՝ Ստամբուլում, իր թերթի խմբագրութեան առջեւ: Թուրքիայի, Հայաստանի, եւրոպական երկրների ու ԱՄՆ տարբեր բարձրաստիճան պաշտօնեաներ, քաղաքական գործիչներ, մտաւորականներ ու հասարակական կազմակերպութիւններ խստօրէն դատապարտեցին կատարուած ոճրագործութիւնը:

Տինքի սպանութեան գործով անցնում է 20 կասկածեալ, այդ թւում՝ սպանութիւնը իրականացրած Օզիւն Սամաստը եւ նրա աջակիցները՝ էրհան Թունչելը, Եասին Հանալը: Բացի Օզիւն Սամաստից, միւս բոլոր կասկածեալները ազատութեան մէջ են: Իսկ Օզիւն Սամաստը, թէեւ ձեռքաւորուած է, սակայն գտնուում է պետութեան հոգածութեան ներքոյ եւ անգամ գիրացել է, պատմում է «Ակօս»-ի աշխատակիցը:

«Ոճրագործը յայտնի է մեզ բոլորիս, բոլորը ճանաչում են նրան, բայց ո՞վ է կանգնած այդ ոճրագործի հետեւում, ո՞վ է իրական պատուիրատուն, դա պէտք է բացառապէս, որը չի արուած», - ասում է Գէորգ Թիւսիւլեանը:

Թուրքիայի արտաքին գործերի նախարարութիւնն այսօր յայտարարում է Կարսի փակման շարունակումը:



Հրանդ Տինք

տարարութիւն է տարածել, որով հերքում է Թուրքական որոշ թերթերում օրերս հրատարակուած այն մեղադրանքները, թէ Թուրքիայի կառավարութիւնը փորձում է արդարացնել յանցագործին:

«Հրանդ Տինքի կորուստը խոր վիշտ է եղել մեր երկրի համար, եւ Թուրքիայի արդարադատութիւնը վճռականօրէն հետազոտում է սպանութեան բոլոր հանգամանքները», - ասում է յայտարարութիւնում:

«Բացարձակապէս անյարիր է պնդել, որ Թուրքիայի կառավարութիւնը փորձում է մեղմացուցիչ հանգամանքներ գտնել Տինքի սպանութեան պատասխանատուներին արդարացնելու համար», - Կիրակի յայտարարել է Թուրքիայի ԱԳՆ-ն, - «Հրանդ Տինքը Թուրքիայի մտաւորականութեան ամենափայլուն ներկայացուցիչներից էր: Անհար է անգամ մտածել նման հրէշաւոր սպանութեան արդարացման մասին»:

Միւս կողմէ՝ Պաշտօնական այցով Պաքուում գտնուող Թուրքիայի նախագահ Ապտուլահ Գիլըն առաջին անգամ ընդունել է Հրանդ Տինքի սպանութեան մէջ պետութեան պատասխանատուութիւնը՝ նշելով, թէ անհրաժեշտ կանխարգելիչ միջոցառումներ չեն իրականացուել:

Թրքական Vatan-ի փոխանցմամբ՝ Պաքու մեկնելիս, լրագրողների հետ զրոյցի ընթացքում, Թուրքիայի նախագահը 3 անգամ ասել է, թէ ցաւօք սրտի, Թուրքիայի քաղաքացի Հրանդ Տինքն սպանուեց, քանի որ պետութիւնն անհրաժեշտ կանխարգելիչ միջոցառումներ չէր իրականացրել:

Հրանդ Տինքը սպանութիւնից մէկ շաբաթ առաջ դիմել էր Մարդու իրաւունքների եւրոպական դատարանի բողոքարկելու թրքական դատարանի որոշումը, որով ինքը դատապարտուել էր:

ՀՆՉԱԿԵԱՆ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԲԱՆԱԿՈՒՄԸ

Շարունակուած էջ 1-էն

ներ, թատերական ներկայացումներ, մարզական խաղեր: Տարբեր օրերին բանակավայր այցելեցին եւ երիտասարդների համար դասախօսութիւններով հանդէս եկան ՄԴՀԿ Կենտրոնական վարչութեան փոխտեսնապետ, Լիբանանի Նորհրդարանի անդամ Սեպուհ Գալպաբեանը, ԿՎ անդամներ Վահան Շիրխանեանը, Եղիկ Զերեջեանն ու Յակոբ Տիրգրանեանը: Բանակա-

վայրում սպասուած հիւրերից էր ՄԴՀԿ անդամ, ազատամարտիկ Վազգէն Սիւլեանը: Նախավերջին օրը Հնչակեան երիտասարդներին այցելեց ՀՀ Սփիւռքի նախարար տիկին Հրանոյշ Յակոբեանը:

«Հայրենեաց հողի կանչով» բանակումն աւարտուեց Միծեռնակաբերդում՝ Հայոց Յեղասպանութեան անմեղ զոհերի յիշատակն յաւերժացնող անմար կրակի մօտ՝ «Տուր Զեռքը Ընկեր» մարտական ուխտի երգի խրոխտ ձայների ներքոյ:

ՄԱՍԻՍ  
ԱՄԵՆԱՎԱՍԱՀԵԼԻ ԱՂԲԻՐԸ ՀԱՅՐԵՆԻ ԼՈՒՐԵՐՈՒ

ԼՈՒՐԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՌՈՒՄԱԿԱՆ ՌԱԶՄԱԲԱԶԱՅԻ ՄԱՍԻՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԵԱՆ ԱՄԲՈՂՋ ՏԵՔՍԸ

NEWS.am-ը ներկայացնում է Ռուսաստանի Դաշնության և Հայաստանի Հանրապետության միջև՝ Հայաստանի Հանրապետության տարածքում ռուսաստանյան ռազմական փոփոխություններ կատարելու արձանագրության մասին գրքի փաստաթուղթը ստորագրություն է Ռուսաստանի Գաղտնիության և Դիվանագիտության Գլխավոր Սեկտորի ղեկավար Գրիգորի Մեդվեդևի օգոստոսի 19-22-ին Երևան կատարելիք այցի ընթացքում:

**Նախագիծ**  
**Արձանագրություն N5**  
Ռուսաստանի Դաշնության և Հայաստանի Հանրապետության միջև՝ Հայաստանի Հանրապետության տարածքում ռուսաստանյան ռազմական մասին Ռուսաստանի Դաշնության և Հայաստանի Հանրապետության միջև՝ 1995 թվականի Մարտի 16-ի Պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին Ռուսաստանի Դաշնության և Հայաստանի Հանրապետության միջև՝ 1995 թվականի Մարտի 16-ի Պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 26-րդ յօդուհանդիմանում, ուշադրություն առնելով առկա վաղ ձեռք բերված պայմանադրականությունները, համաձայնեցին ներքոյից լի մասին:

«Յօդուհանդիման 1  
Պայմանագրի 3-րդ յօդուհանդիմանը շարադրել է ստեղծել խմբագրություններ:

«Յօդուհանդիման 3  
Ռուսաստանյան ռազմական ներքին իրականացում է կողմերի համապատասխան պայմանադրականություններից բխող խնդիրներ:

Ռուսաստանյան ռազմական ներքին Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվելու ժամանակաշրջանում բացի Ռուսաստանի Դաշնության շահերի պաշտպան

նությունների իրականացումից Հայաստանի Հանրապետության Զինուժ Ուժերի հետ համատեղ ապահովում է Հայաստանի Հանրապետության անվտանգությունը:

Նշում է նպատակներին հասնելու համար Ռուսական կողմը աջակցություն է ցուցաբերում Հայաստանի Հանրապետության արդիական և համատեղելի սպառազինությունների, ռազմական (չատուկ) տեխնիկայով ապահովելու գործում: Ռուսաստանյան ռազմական ներքին զինուժը իրականացում է կողմերի փոխադարձ պայմանադրականությունների, 1992 թվականի Մայիսի 15-ի Հաւաքական անվտանգության պայմանագրի, Ռուսաստանի Դաշնության և Հայաստանի Հանրապետության միջև՝ 1995 թվականի Մարտի 16-ի Պայմանագրի և փոխադարձ օգոստոսի 29-ի պայմանագրի հիման վրայ է կողմերի օրէնսդրական համապատասխան»:

«Յօդուհանդիման 2  
Պայմանագրի 26-րդ յօդուհանդիմանը շարադրել է ստեղծել խմբագրություններ:

«Յօդուհանդիման 26  
Սոցիալական գործում է քառասունինը տարի ժամկետով և առտոմատ կերպով երկարացում է յետագայ հնգամեայ ժամանակաշրջանների համար, եթէ կողմերից որեւէ մէկը սոցիալական գործողություններ չկատարեն իր մտադրություններին: Սոցիալական գործողությունները կարող են վերանայուել կողմերից մէկի նախաձեռնությամբ և փոխադարձ համաձայնությամբ:

«Յօդուհանդիման 3  
Սոցիալական գործողությունները ենթակա է վաւերացման և ուժի մէջ է մտնում դրա վաւերագրերի փոխանակման օրուանից»:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՋ ՌՈՒՄԱՍՏԱՆԵԱՆ ՌԱԶՄԱԿԱՅԱՆԻ ՀԱՍՏԱՆԱԳԻՐ

Մարտնական լուսանկարներ 1-էն

Համար, Ռուսական կողմը աջակցություն պիտի ցուցաբերէ Հայաստանին արդիական սպառազինություններով ապահովելու հարցով:

Պայմանագրի պիտի գործէ 49 տարի ժամկետով, սկսելով 1995 թվականից և պիտի երկարաձգուի հետագայ հնգամեայ ժամանակաշրջաններում համար, եթէ կողմերն ունենան մէկը Պայմանագրի հերթական ժամկետը լրանալիս առնուազն վեց ամիս առաջ գրաւոր շտեղծակցանք միւս կողմին՝ գործողություններ դադարեցնելու իր մտադրություններին:

Մեկնաբանելով այս փոփոխությունները՝ իշխող Հանրապետական կուսակցության փոխնախագահ Ռազմիկ Զոհրաբեան յայտարարեց, թէ այդ փոփոխությունները շահաւէտ են ինչպէս Ռուսաստանի, այնպէս էլ Հայաստանի համար:

ՀՀ-ի փոխնախագահի համաձայն, այդ փոփոխություններով Հայաստան կ'ամրապնդէ իր պաշտպանությունը, ինչ որ գալով հանգամանք կը հանդիսանայ Ատրպէյճանի համար, որ անընդհատ յայտարարություններ կը կատարէ պատերազմական քայլերի հարցը լուծելու վերաբերելով:

Ռազմիկ Զոհրաբեան վստահ է, որ Ատրպէյճանի կողմէ պատերազմ սկսելու պարագային ռուսաստանյան ռազմական կը պաշտպանէ Հայաստանի անվտանգությունը: «Եթէ դարաբարեան հակամարտությունը նորից լարուի, պատերազմ առաջանայ Ղարաբաղի և Ատրպէյճանի միջև, բնականաբար, Հայաստանն անմիջական իր միջամտություններն ունի այդ խնդրում և եթէ Հայաստանն իրաւունք ունի Ռուսաստանի այդ բազան օգտագործի նաեւ իր անվտանգությունը ապահովելու համար: Դուրս է գալիս, որ Ռուսաստանը պէտք է միջամտի այդ պատերազմին՝ Հայաստանի կողմից»:

Ինչ կը վերաբերի պայմանագրի երկարաձգելու Ռուսաստանի շահագրգռվածություններին, ապա Զոհրաբեանի խօսքով, այդպիսով Ռուսաստան մինչև 2044 թվականը կ'ապահովագրէ իր ներկայությունը տարածաշրջանին ներս:

ԳԻՄՈՐԻՈՒՄ «ԳԼԵՆԴԵԼ ՅԻԼԶ»-Ի ԿԱՌՈՒՑԱԾ ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐՆ ԻՆՔՆԱՓԼՈՒԶՈՒՄ ԵՆ

ԴԵՐՆԵՆԻԿ ՄԱԼԽԱՍԵԱՆ

Գիւմրու Մուշ-2 թաղամասում անօթեւաններին հանդիսաւոր կերպով նորակառուց բնակարաններ յանձնելուց յետոյ պարզուեց, որ այդ բնակարաններից շատերը պատուհաս են դառնում նոր տանտէրերի համար: Բնակիչները պարբերաբար ահազանգում են բնակարաններում տարատեսակ խնդիրների առնչությամբ. մի դէպքում բնակիչը յայտնաբերում է, որ հարեւանի տան կողմը խողովակով հոսելու փոխարէն լցում են իր տունը, մէկ այլ դէպքում ճաքեր են յայտնուում տների պատերին, իսկ այսօր Մուշ-2 թաղամասի թիւ 16 շէնքի 13-րդ բնակարանի բնակիչները գիշերը արթնացել են այն բանից, որ ինքնափուլուղու է իրենց ննջասենեակի գաջապատ առաստաղը:

«Քնած տեղը յանկարծակի ճռուց լսեցի, արթնացայ: Ինձ թուաց՝ դրսի դուռն էր, յետոյ փորձեցի մօտենալ պատուհանին, սակայն առաստաղն իջաւ գլխիս: Ես արդէն այդ ժամանակ ամուսնուս հագիւ պառկած տեղից հանել եմ ու գրկած խոհանոց եմ տարել. ամուսինս առաջին կարգի հաշմանդամ է»,- պատմել է տանտիրուհի Անժիկ Մելիքեանը:

Վերջինիս նաեւ նշել է, որ ինքը նիւթական վնաս է կրել. «3-4 հատ լուստրայ է ջարդել, սեղան է ջարդել՝ չհաշուած ներդրերս ու հոգեկան ապրումներս»,-ասել է տանտիրուհին:

Անժիկ Մելիքեանը նշել է, որ նման պայմաններում հնարաւոր է հայրել, եւ ինքը պատրաստուած է բանալիները հետ վերադարձնել:

«Ես իմ բանալիները իրենց եմ տալու, թող ինձ ուրիշ բնակարան յատկացնեն, այս բնակարանի մէջ հնարաւոր չէ ապրել: Եթէ իմ ամբողջ բնակարանի պատերի եւ առաստաղի ստեղծանքները թափեն ու նորից անեն, էդ դէպքում հնարա-

ւոր է, որ համաձայնուեմ էստեղ ապրել, եթէ էլ, ապա թող ինձ նոր բնակարան տան, կամ «դոմիկ» տան: Իմ «դոմիկ» հազար հատ էսպիսի բնակարան արժէք»,- իր հիասթափություններն է յայտնել տանտիրուհին:

Անժիկ Միմոնեանը նաեւ յայտնել է, որ «Գլենդել հիլզ»-ի աշխատողներից մէկն իրեն խորհուրդ է տուել լրատուամիջոցներին չդիմել, քանի որ օգուտ չկայ. «Որ եկան նկարահանեցին ու



գրեցին, ինչ օգուտ կը ստանաք: Դու օգուտ չես ստանայ, մօրքոյր ջան: Իսկ հիմա ես խօսք կտամ, որ ամէն ինչը կը սարքեմ»:

Բայց էդ խօսքը շատ հեռու է գործից: Մուշ-2 թաղամասի շատ բնակիչներ բազմաթիւ դժգոհություններ են յայտնում անորակ շինարարության առումով, եւ սա այն դէպքում, երբ ՀՀ նախագահ Սերժ Սարգսեանը բնակարանների որակին անձամբ ծանօթանալուց յետոյ միայն թոյլ տուեց դրանք յանձնել անօթեւաններին: Իսկ գիւմրեցիներին վստահեցնում էին, թէ իշխանությունները խիստ վերահսկողություն տակ են պահում այս շինարարությունը:

ԱՄԵՐԻԿԱՅԻ ՎԵՐԱՔՆՆԻՉ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ

Մարտնական լուսանկարներ 1-էն

պանություններում՝ ցեղասպանություններ ժխտող գրականությունները ընդգրկելով նահանգի կրթական ծրագրերում մէջ:

Հայցը Առաջին ատենի դատարան ներկայացուած էր 2005-ին՝ Ամերիկայի թրքական միություններում համագումարի եւ թուրք-ամերիկեան իրաւական պաշտպանություններին հիմնադրամի կողմէ միասնաբար: Անոնք կը պնդէ-

ին, որ Հայոց ցեղասպանությունը ժխտող գրականությունները ծրագրերէն դուրս ձգելը խօսքի ազատության իրաւունքի խախտում է:

Առաջին ատենի դատարանը մերժած էր հայցը, իսկ 2009-ին Ամերիկայի թրքական միություններում համագումարը եւ միւս կազմակերպությունները դիմած էին վերաքննիչ դատարան, որ, սակայն, անփոփոխ պահեց առաջին ատենի դատարանի վճիռը:

### ՄԴՅԿ-ՅԱԿ ԿԱՊԵՐՈՆ ԽՁՈՒԵՑԻՆ

Օրերս Երեւանում տեղի է ունեցել Մ.Գ. Հնչակեան կուսակցութեան կենտրոնական վարչութեան լիազուգումար նիստ, որին մասնակցել են Սփիւռքի տարբեր շրջանների ներկայացուցիչներ:

«Առաւօտը» փորձեց ՄԴՅԿ կենտրոնական վարչութեան անդամ, ԱՄՆ-ի Կալիֆոռնիայի նահանգում բնակուող Համբրիկ Սարաֆեանից ճշդել՝ մէկ Հայաստան եւ երկու ՄԴՅԿ կայ. ի վերջոյ, տասնամեակներ շարունակ Սփիւռքում գործող ՄԴՅԿ կառույցները հայաստանեան երկու ՄԴՅԿ-ներից որի՞ն են ճանաչում որպէս իրենց իրաւաւորը եւ նշանակու՞մ է, որ Հայաստանում եւ Սփիւռքում գործող ՄԴՅԿ կառույցները այլեւս էապէս տարբեր կառույցներ են:

«Սրան շատ յստակ պատասխան կարող եմ տալ. Հնչակեան կուսակցութեան կենտրոնական վարչութիւնը, որի անդամն են Սփիւռքում գործող կառույցների ներկայացուցիչները, ճանաչել ու ճանաչում է Գէորգ Պերկուպերկեանի տեղի ունեցած համագումարը եւ Գէորգ Պերկուպերկեանի գլխավորած վարչի Մարմինը: Հնչակեան կուսակցութիւնը որեւէ այլ կառույց չի ճանաչում: Իհարկէ, բոլորովին չէին ցանկանայ, որ այսպիսի իրավիճակ ստեղծուէր, բայց, դժբախտաբար, ստեղծուեց, եւ, անշուշտ, այդ պրոցէսին իրենց մասնակցութիւնը բերած անհատները կամ կազմակերպութիւնները նպաստեցին, որ այդ պրոցէսը կուսակցութիւնում շատ աւելի խորացուած դնայ, քան կարող էր լինել», - ասաց Հ. Սարաֆեանը՝ ակնարկելով ՀԱԿ-ին կամ նրա ներկայացուցիչներին:

Սարաֆեանը, այսուհանդերձ, պնդեց, թէ ՄԴՅԿ-ն ե՛ւ անցեալում, ե՛ւ այսօր ընդդիմադիր դիրքերում է եւ մէկ նպատակ ունի՝ նպաստել Հայաստանում առկայ եւ ՄԴՅԿ-ի համար անընդունելի երեւոյթների վերացմանը: Նրա ասելով, խօսքը վերաբերում է մեր երկրում արդարութեան, ժողովրդավարական համակարգի հաստատմանը, ազատ եւ թափանցիկ ընտրութիւնների անցկացմանը, արդար դատական համակարգի ձեւաւորմանը: «Դրանք են երկիրը իսկապէս բարգաւաճ դարձնելու եւ Հայաստանի նկատմամբ Սփիւռքում վստահութիւն ներշնչելու գրաւակները», - ասաց ՄԴՅԿ ԿՎ ներկայացուցիչը: Ըստ նրա, աւելի քան մէկ դար գործող ՄԴՅԿ-ն աչալրջօրէն հետեւում է արցախեան հարցի, հայ-թուրքական յարաբերութիւնների շուրջ ընթացող վարձարձերին, եւ որեւէ քայլ, որեւէ գիշում, որը կարող է վնասներ բերել Հայաստանին կամ հակասել հայութեան ազգային շահերին, ՄԴՅԿ-ի համար չի կարող ընդունելի լինել:

Յայտնի է, որ ՀԱԿ-ն ու ՄԴՅԿ-ն որոշակի տարակարծութիւններ ունէին յիշեալ երկու հարցերի համատեքստում, բայց սերտօրէն համագործակցում էին ՀԱԿ-ի կազմում, մասնաւորապէս Հայաստանի ներքին խնդիրների համատեքստում: ՄԴՅԿ հայաստանեան կառույցի պարակտման հիմնական պատճառն այն էր համարուել, թէ ՄԴՅԿ-ն փորձում է դուրս գալ ՀԱԿ-ից եւ համագործակցել իշխանութիւնների հետ: Հենց այդ պատճառով հարցերինք՝ իսկ ՄԴՅԿ ԿՎ-ն կամ նրա կողմից ճանաչուած հայաստանեան վարչի մարմինը՝ Գէորգ Պերկուպերկեանի գլխավորութեամբ, ՀԱԿ-ի հետ կապերը խզելուց յետոյ շարունակու՞մ է արտահերթ ընտրութիւնների եւ նախագահ Սերժ Սարգսեանի հրաժարականի պահանջներ դնել: Հ. Սարաֆեանի մատուցմամբ, հիմա այդ խնդիրներն այլեւս նախկին սրութեամբ դրուած չեն, որովհետեւ Հնչակեան կուսակցութիւնը համարում է, որ աւելի կարեւոր է երկրում համակարգային փոփոխութիւն իրականացնել, ու անձերի փոփոխութեամբ համակարգային փոփոխութիւններ անել հնարաւոր չէ: «Մեր կարծիքով, այսօր առկայ համակարգը օլիգարխիկ է ու մենաշնորհային երեւոյթներ է արմատաւորել: Տնտեսութեան ոլորտում առկայ դժուարութիւնները գալիս են հենց այդ համակարգից: Այսինքն, պետութեան մէջ պետութիւն կայ: Կայ մի շերտ, որը կարող է անել ամէն ինչ, որին թոյլատրուած է ամէն ինչ, որը խեղդում է միջին դասակարգի առաջացմանը: Կուսակցութիւնը չի կարծում, որ անձերի փոփոխութեամբ իրավիճակը կը փոփոխուի: Մենք կարծում ենք, որ համակարգային փոփոխութիւն է անհրաժեշտ: Եւ, դաւանելով սոցիալ-դեմոկրատական գաղափարախօսութիւն, կուսակցութիւնը կարծում է, որ այս երկիրը պէտք է սոցիալ-դեմոկրատական ուղղութեամբ շարժուի: Ամէն պահ իր պահանջն ունի, եւ այսօր պարզ է, որ այդպիսի պահանջների՝ արտահերթ ընտրութիւնների կամ նախագահի հրաժարականի, իրականացման նախադրեալները բա-



ցակայում են: Ուստի, նստել եւ դրա մասին խօսել, կարծում եմ, շատ աւելի պակաս կարեւոր է, քան՝ անձերի փոփոխութիւնից չկախուած համակարգային փոփոխութեան ծրագրեր մշակելը: ՄԴՅԿ առաքելութիւնը մենք տեսնում ենք այս երեք հարցերի՝ ԼՂ հիմնախնդրի, հայ-թուրքական յարաբերութիւնների եւ երկրում ճանաչուած համակարգային փոփոխութիւնների անհրաժեշտութեան արժարժման մէջ»:

«Առաւօտը» փորձեց նաեւ ճշդել՝ առաջիկայ խորհրդարանական ընտրութիւններին ՄԴՅԿ-ն մտադիր է առանձի՞ն մասնակցել: «Իհարկէ, խօսուած է այդ մասին, բայց ընտրութիւններին դեռ բաւական ժամանակ կայ: Հիմա մենք կարեւոր ենք համարում, որ ՄԴՅԿ-ն գնալով ամրապնդուի, շատ ծրագրեր կան, որոնց իրագործմանը կուսակցութիւնը հետամուտ է լինելու, որովհետեւ հաւատում ենք,

որ մեր ծրագրերով կարող ենք դրական դեր խաղալ Հայաստանի կեանքում: Ի վերջոյ, մենք երազել ենք, որ կը գայ մի օր, որ Սփիւռքում այսքան ժամանակ գործող կուսակցութիւնն իր գաղափարները Հայրենիքում իրականացնելու հնարաւորութիւն կ'ունենայ», - ասաց Սարաֆեանը:

Արձագանքելով մեր հարցին՝ ՀԱԿ-ի հետ ապահարգանք վերջնակա՞ն է, թէ՞ հնարաւոր է, որ ինչ-որ փուլում համագործակցութիւն, շփումներ էլի լինեն, ՄԴՅԿ ԿՎ ներկայացուցիչն ասաց. «Այս պահին, դժբախտաբար, յարաբերութիւնները խզուած են: Ու թէեւ շատ հարցերում՝ մանաւանդ հայ-թուրքական, ԼՂ վերաբերեալ ՄԴՅԿ-ի եւ ՀԱԿ-ի տեսակէտները չէին համընկնում, բայց դա չէր բացառում համագործակցութիւնը Հայաստանի ներքին հարցերի շուրջ: Այսօր այդ յարաբերութիւնները շարունակելը անհնարին են դառնում: Բայց ոչինչ բացառել չի կարելի, որովհետեւ յայտնի չէ, թէ ապագան ի՞նչ կը բերի եւ ի՞նչ խնդիրներ կ'առաջանան, կը լինեն հարցեր, որոնց շուրջ կարելի կը լինի համագործակցել: Մենք չենք բացառում համագործակցութիւնը որեւէ ուժի հետ, եթէ դա կը նպաստի երկրի հզօրացմանը, ժողովրդի վիճակի բարելաւմանը: Բայց եթէ դա ծառայեցուի գուտ կուսակցութեան, խմբային շահերին, ուրեմն՝ մենք սխալ ուղղութեան վրայ կը լինենք»:

ՆԱԻՐԱ ՄԱՄԻԿՈՆԵԱՆ  
«ԱՌԱԻՕՏ»

**ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ**  
**ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՕՆ**

Yes, I wish to subscribe to Massis Weekly  
Enclosed a check for (one year)  
\* \$50,00 for USA  
\* \$60,00 (second class), \$ 75,00 (Air Mail) for Canada.  
\* \$85,00 (second class), \$ 125,00 (Air Mail) Overseas.

Name: -----  
Address: -----  
City: ----- State:----- Zip Code:-----  
Country: -----  
Tel :----- Fax : -----

**Bedros S. Maronian 818/500-9585**      **Siamanto B. Maronian 818/269-0909**

SERVING THE COMMUNITY SINCE 1975  
More locations and more ways to service your insurance and financial needs

6300 Wilshire Blvd. Suite 1900 Los Angeles, CA 90048      805 East Broadway Glendale, CA 91205      300 N. Lake Ave. Suite 500 Pasadena, CA 91101

- Life Insurance
- Health Insurance
- Group & Individual
- Long Term Care
- Disability
- Estate Planning
- Will & Living Trust
- Full Annual Review
- Mortgage Protection
- College Planning
- Workman's Compensation
- Employee Benefits
- Annuity
- IRA
- 401K & 403B

**A.B.A. INSURANCE SERVICES**

**Insurance coverage can help you financially!**  
Ապահովագրուիւնը Աճիրածնութիւն է

Coverage & Protection should be on the top of your priority list.

Seniors 65 & Up Medicare Supplements • Insurance • Prescriptions Drugs RX • Benefits

Logos for New York Life, Anthem, BlueShield, Aetna, Health Net, CIGNA, Kaiser Permanente.



### ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄ «ԿՈՎԿԱՍԵԱՆ ԿԱԹՍԱՆ ԵՒ ՀԱՅԱՍՏԱՆԸ»

ՄԴՀԿ «Փարամագ» մասնաճիւղի կազմակերպութեամբ, Յունիս 28 2010 ին տեղի ունեցաւ հրապարակային քննարկում մը, ՀԿԲՄԻ Կարօ Սողանալեան սրահէն ներս: Երեկոյի բացումը կատարեց Ընկ. Վահէ Աջապահեան բարի գալուստ մաղթելով - շնորհակալութիւն յայտնելով ներկայ հոծ հասարակութեան: Ապա ան հրաւիրեց Յարութ Տէր Դաւիթեանը, որպէս զի վարէ քննարկումը: Նախքան զեկուցողները ներկայացնելը, ան բացատրեց կարեւորութիւնն ու հրատապութիւնը օրուան թեմային: Արագ ակնարկ մը նետելով մեր մօտիկ անցեալի պատմութեան վրայ ու ներկայի զարգացումներուն հետ կարգ մը գոլգոհներուն նշումը կատարելով, ան շեշտեց հոնկէ դասեր վերցնելու անհրաժեշտութիւնը: Ապա մի առ մի հրաւիրելով օրուան զեկուցողները ան ընթացք տուաւ քննարկման:

Դոկտ. Ճօ Քէշիշեան նշեց որ Հայաստան շատ փափուկ կացութեան մէջ է, որովհետեւ իր դրացի երկիրները բոլորովին տարբեր քաղաքական ուղիներով զարգացած են: Ան մեզի համար նպաստաւոր նկատեց դրացի երկիրներու մէջ ժողովրդավարութեան զարգացումը, որովհետեւ հարուստ - բռնապետական կարգեր ունեցող դրացիները (Թուրքիա - Ազրպէյճան) վտանգաւոր են այն իմաստով, որ կը փորձեն իրենց կամքը պարտադրել տկարին վրայ: Յայտնելով իր այն համոզումը թէ Հայաստանի ապագան կապուած է Եւրոպայի հետ, ան կարեւորեց այդ ճամբու վրայ գտնուող երկիրներու հետ (Վրաստան - Թուրքիա) բարի դրացիական յարաբերութիւններու զար-

գացումը՝ մեկնելով մեր ազգային շահերէն:

Փրոֆ. Օշին Քէշիշեան, օրինակ բերելով Իսթանպուլի մէջ անցեալ Յունուարին «Անատոլու Քուլթուրու» հաստատութեան կողմէ կազմակերպուած «Ժամանակ» օրաթերթի 100 ամեակի նշումը - այդ առթիւ իրեն ուղղուած հրաւերը մասնակցելու այդ նպատակաւ կայանալիք սեմինարին, տուաւ երկու եզրակացութիւն: Առաջին. Թուրքիան ոչ միայն մօտէն կը հետեւի Հայաստանի անցուղարձներուն, այլ նաեւ Սփիւռքահայ դէմքերու - զարգացումներու, որպէս զի ըստ այնմ զանոնք ծառայեցնէ իր հաշիւներուն: Երկրորդ. մեզի կը պակսի նոյնպիսի քաղաքականութեան մշակումը, կարենալ լաւագոյնս դիմադարձելու գա-

Տօքթ. Համբիկ Սարաֆեան կարեւորեց Հայաստանի ու հայու-թեան սպառնացող վտանգներու, ինչպէս նաեւ հարցերու լուծման մեր մօտեցումները վերատեսու-թեան ենթարկելու անհրաժեշտութիւնը: Ան շեշտեց որ չի բաւեր խօսիլ պահանջներու մասին, այլ նաեւ պէտք է մշակել զանոնք իրականացնելու ուղիներ: Մեր Դատի - յարակից խնդիրներու արդար լուծումը օտարներէն ակնկալելը դուռ կը բանայ յուսախաբութեանց, եթէ մենք թերանանք մեր բաժին քայլերը առնել այդ ուղղութեամբ:

Զեկուցողներուն յաջորդեց քննարկում՝ զեկուցաբերներու - ներկաներու մասնակցութեամբ, երեկոյի ընթացքին արծարծուած հարցերու մասին: Հանդիսութիւնը աւարտեցաւ հիւրասիրութեամբ:

Աթէնք, «Հայաստան լրատու»: Յունաստանում եւ Կիպրոսում ՀՀ դեսպանութեան ռազմական կցորդ գնդապետ Սամուէլ Ռամազեանի տարածած հաղորդագրութեան համաձայն, ՀՀ ՊՆ նախարար Սեյրան Օհանեանի հրամանագրի համաձայն, ՀՀ Զինուած Ուժերին մատուցած ծառայութիւնների, ինչպէս նաեւ Յունաստանի ռազմատուժմանակաւ հաստատութիւններում հայ կուրսանտների ուսումնառութեան մշտական աջակցութեան ցուցաբերման համար ՀՀ ՊՆ «Մարշալ Բաղրամեան» մեդալով պարգևատրուել է Տ. Ոսկան արքեպիսկոպոս Գալփակեանը:

Հաղորդագրութեան մէջ նշուած է, որ սրբազանը, «Հայոց բանակի կազմաւորման առաջին իսկ օրերից հանդէս է եկել զանազան հայրենասիրական նախաձեռնութիւններով՝ այդ կերպ իր անձնական լուծման ներդրել հայրենիքի պաշտպանունակութեան ամրապնդման գործում»:

է, որ Թուրքիայի կառավարութիւնը չի խոչընդոտում իրենց խմբի ջանքերին՝ վերադարձնելու Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցու երբեմնի փառքը:

Հարիւրամեակներով Կայսերիի եկեղեցին համարուել է Հայ Առաքելական եկեղեցու կարեւոր սրբատեղիներից մէկը, աթոռանիստ եկեղեցի: Համարուում է, որ այս եկե-

ղեցին հիմնադրել է Սուրբ Գրիգոր Լուսաւորիչը:

Կայսերիի հայկական եկեղեցում տարին չորս անգամ պատարագ է մատուցուելու, եւ մօտաւորապէս 300-400 հայեր կ'աղօթեն այս պատերի ներսում, ինչպէս նրանց նախնիները հազարամեակների ընթացքում, գրում Global Post-ը:

### ԳՐԱԿԱՆ ԵՐԵԿՈՅ

#### Ռ. ԿՈՐԻԻՆ

Գրական ոգեւորիչ երեկոյ: Քիչ թեւով լսարան, սակայն ինչ հրաշալի ներշնչման մթնոլորտ:

Ճախրանք դէպի վեհին ու վսեմին:

Բովանդակալից փոքրիկ ծաղկաստան բոլորով ու տեսքով երկինատեսակ: Ինձ թւաց թէ մեր մշակուցի նւիրուած երեկոյ է, չէ որ Հոկտեմբեր ամսում նմանատիպ ազատ բեմ է յայտարարուած մեր մշակուցի տիտանների ոգեկոչման առիթով, գրչի անձեր իրենց ստեղծագործութիւններով փառաբանում են պանծալի Ոսկեդարը կերտող-

#### ՆԵՐԻՆ:

Օրը Հինգշաբթի, Օգոստոս 5, 2010 թիւ, իրիկնապահ, Գլենտէլի հանրային գրադարան:

Կալիֆորնիայի Հայ Գրողների Միութեան հերթական հանդիպում:

Մեկնարկումը կատարեց միութեան նախագահ՝ բանաստեղծ Գրիշ Դաւթեանը, լսարանին ներկայացուց արձակագիր Սահակ Թութեանը, թատերագիր Ռազմիկ Սիմոնեանը եւ բանաստեղծ Անդրանիկ Մկրտչեանը, որոնք առաջին անգամ լինելով ներկայ էին գտնուել հանդիպմանը: Դասլիճին

Շաբ.ը էջ 19

**ՏԵՐ ԿԱՆԳՆԵՆՔ ՄԵՐ ԱՐԺԵՔՆԵՐԻՆ**

ՅՈ. ՍՏՐԺԻԳՈՎՍԿՈՒ

«ՀԱՅԵՐԻ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԵՒՐԱՊԱՆ»

Գրքի հրատարակման 90-ամեակի հետևերով  
27-ը Օգոստոսի 2010-ին

Կլեմտէյի Համրայիմ Գրադարանի Դահլիճում  
(222 East Harvard Street)

Կազմակերպում է՝

**«ԱՅ-ԲԻԻՉԱՆԴԱԿԱՆ ԵՒ ԱՅ-ԻՏԱԼԱԿԱՆ ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ԱՌՆՉՈՒԹԻՒՆՆԵՐ»**

Թեմայով  
Ձեկուցող՝ Ճարտարապետ

**ՎԱՐՈՒԺԱՆ ԱԳՇԵՅԻՐԼԵԱՆ**

Հանդիսավար՝ ԿԱՐԻՆԷ ՏԵՐ ԳԵՒՈՐԳԵԱՆ

Կազմակերպիչ՝

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՆԵՐԻ ՄԻՈՒԹԵԱՆ ԱՄՆ ՄԱՍՆԱԾԻՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆ**

Սկիզբը՝ երեկոյեան ժամը 7-ին  
Հրաւիրուում է հայ հասարակութիւնը

Մուտքը Ազատ

### ԳԻՐՔԸ ԼՈՒՄՅՈՅ ԱՂԲԻՐ

#### Ռ. ԿՈՐԻԻՆ

Ինչպես ակնառանգում ու վկան ենք, մեր նիւթական աշխարհը յարահույ փոփոխութեան մէջ է՝ հեռահաղորդակցական, տեղեկատուական, տիեզերագիտական, բժշկական եւ այլ գիտական բնագաւառներում: Այս զարգացողութիւնը արդիւնքն է հանճարեղ մարդկանց մտքի շողարձակման ու ճառագայթումին: Համոզուած ենք, որ ոչ մի բան ինքնաբերաբար չի յայտնաբերուում, այլ՝ փորձերի եւ հետազոտութիւնների շնորհիւ է: Այսպիսով մեզ բոլորիս յայտնի է դառնում, որ մարդկային զարգացած ու յառաջադիմած այսօրուայ կեանքը պարտական ենք հանճարեղ գիտնականների ուղեղի փայլատակումներին եւ հետեւողական անխոնջ աշխատանքներից երկնած արդիւնքներին:

Անկասկած գիտութիւնը ջամբում են գրքերից: Գրքերի գիտութեամբ գինւած մարդը՝ հանց լոյսի սրննթաց թեւեր, աներեւակայելի գորութեամբ ճեղքում է անձայրածիր տիեզերքը դէպի հեռավոր մոլորակները յանուն նոր յայտնագործումների: Գիտութիւնը նրանց մօտ է, ով շատ գրքեր է կարդում եւ չի դադարում ընթերցելուց: Գիրքը որպէս լուսոյ ակնաղբիւր պտղաւորում է մարդկային միտքը գիտական լոյսով, հանց ջուրն է ծաղկեցնում խոպան դաշտերը, այդ լոյսը ցրում է խաւարն ու տգիտութիւնը, սնտան ու սնապաշտութիւնը պայծառ ու ցոլարձակ ուղիներ բացելով մարդ-էակի հայեացքին դէմ յանդիման դէպի իրական եւ շօշափելի կեանք:

Այս յառաջացած ու զարգացած դարահատուածում տակաւին շատ հարցականներ եւ հանգոյցներ մնում են անպատասխան եւ անլոյծ տիեզերքի այս բարդ հիւսւածքում, որոնց յայտնագործման ոլորտներում գիտնականները յոյժ անելիքներ ունեն: Լիայոյս ենք, որ նրանք այդ բոլորը եւս կը լուծեն իրենց ուղեղի թռիչքներով, անդուլ գիտական աշխատանքներով՝ մարդկութեան համար տիեզերքի գաղտնի ծալքերը ի յայտ բերելով:

Անշուշտ մարդկութիւնը ձիգ դարերի բաւիղներից անցնելով հասել է մեր լուսաւոր դարաշրջանի քաղաքակրթութեան եւ գիտական նւաճումների խոշոր ձեռքբերումներին, զորս հունձքն է գիտուն մարդկանց մտքի խոցանքներին:

Աշխարհի քաղաքակրթութեան եւ գիտութեան յառաջընթացից անմասն չեն մեր հայ իմաստասէրներն ու գիտնականները հին դարերից սկսեալ մինչեւ մեր օրերը: Մենք հայերս աշխարհի հին ժողովուրդ ենք: Մեր հրաշափառ մշակոյթի մագաղաթեայ մատենաներն են վկայում մեր ազգային Մեսրոպ Մաշտոցի անւամբ մատենադարանում եւ հազարամեայ մեր հիասրաշ կոթողները Հայաստան աշխարհի երկնակամարի տակ:

Հայոց հինգերորդ դարի փառահեղ կոթողային արարմունքը ինքնագիտակցման եւ ճակատագրական անկիւնադարձ եղաւ ամրապնդելով հայ ժողովուրդի արժանի գոյատեւումը:

Հինգերորդ դարը «Ոսկեդար» պսակեց եռամեծար վարդապետների մեծաքանչ աշխատութիւնների շնորհիւ: Բարոյախմաստասէր կեանքի, ազգային դպրութեան եւ մշակոյթի այդ ուսնափրանները՝ Ս. Մեսրոպ Մաշտոց, Ս. Սահակ կաթողի-

կոս, Վրամշապուհ Արքայ, Մովսէս Խորենացի, Եղիշէ, Եզնիկ, Կորիւն, Շիրակացի եւ դեռ երկար ոսկեայ օղակների շարանը մեր հայ իրականութեան մէջ հանդիսացան հայոց ճախրանքի հաւատքի եւ իմաստութեան հիմնադիր տիտանները, որոնք թարգմանչական եւ ստեղծագործ գրքերով կառուցեցին հայոց դպրութեան մշակոյթի անխորտակելի բերդը, որը հանդիսացաւ հայ ժողովուրդի գոյութիւնը երաշխաւորող պատուարը ընդդէմ դարերի փոթորկայոյց հողմերի:

Գիրքը դարերի ընթացքում կերպարանափոխել, մտափոխել եւ հոգեփոխել է մարդկային կեանքը, նա ծառայել է որպէս լուսոյ աղբիւր, ատակ սրտերն ու հոգիները յափշտակելով նրա լոյսով դարձել են գիտուն եւ իմաստուն լուսաւորելով ազգ ու ազինք:

Գիրքը կերակուրն է մտքի, սնունդն է հոգու, ինչպէս արեւն ու ջուրը սնունդն են մարդ-արարածին, բուսականութեան, կեանքը ծաղկում եւ գեղեցկանում է արեւով եւ գրքով:

Գրքի մասին մեր սոյն գրութեան մէջ յիշենք երջանկայիշատակ Գարեգին Ա. կաթողիկոս Սարգսեանին, նա իր ջերմ հոնտորական քարոզներով, հետաքրքրաշարժ դասախօսութիւններով եւ բարձրարժեւտ գրականութեամբ յորդորում, խրատում եւ դաստիարակում էր սերունդները, գրքի վերաբերեալ նա պատգամում է, թէ՛

«Գիրքը մի՛ արհամարհէք»: «Եթէ ձեզմէ մէկը գիրքը արհամարհ եւ հայ գիրքը անտեսէ, արեւի լաւ է, որ հայոց սա բարձրաբեր ձեռներու սեպ գագաթներէ ինքզինք վար նետէ դէպի անդրախոր ձորերը եւ դառնայ ժայռերու կերակուր»:

Ասում են՝ հայ գիրք չեն ընթերցում, կարդացողները շատ քիչ են մեր օրերին, քիչ թէ շատ միշտ այսպէս է եղել, սակայն ասողները թող լաւ իմանան, որ լաւ գիրքը, արժէքաւոր գիրքը պաշտամունքի

է արժանանում եւ ձեռք-ձեռք անցնում:

Տառապակոծ հոգուց բխած գիրքը սնունդն է հոգու:

Ինչպէս անձրեւը ծաղկեցնում է խոպան դաշտերը, բերք ու բարիքով է լցնում, նոյնպէս գիրքը զարգացնում է մարդկային միտքը տարբեր գիտութիւններով եւ արւեստներով:

Իւրաքանչիւր ազգ կանգուն է իր մշակոյթով: Մշակոյթը գալիս է դարերից, մշակոյթ կոչումը համատեղումն է բոլոր արւեստների, ամէն մի թանկագին գիրք ոսկեայ մեղալիոն է մշակոյթի գանձարանում:

Նա չարը խափանում բարին է յորդորում:

Անյաջող գիրքը նոյնիսկ արժէ մի անգամ կարդալ եւ նրանից բան սովորել, պարսկական առանձն ասում է՝ շնորհքը ումից սովորեցիր՝ անշնորհքներից ( Աղաբ ու ազ քի ամուխթի, ազ բի աղաբան ) :

Գիրքը պէտք է ասելիք ունենայ, գրաւիչ լինի, ընթերցողին կապի իր հետ, արժէքների փոխանցող լինի: Արժէքաւոր գիրքը լուսոյ տաճար է՝ խաւարը հալածող, լոյսը պիտող:

Այն ինչ փոխանցել է ծնողներիցս, այն ինչ ջամբել եմ ուսուցիչներիցս եւ այն ինչ ստացել եմ գրքերից մղիչ եւ խթանիչ ուժ են հանդիսացել իմ յոյգերին ու զգացումներին, մտածումներին ու մտորումներին, որոնք ծնունդ են տւել իմ գրչին պատկանող առաջին գրքին:

Առաջին գիրքս տպեց Ամերիկայում: Իմ տեղափոխելս Իրանից կատարեց 2005 փետրուար 14-ին, մէկ տարի անց իմ մէջ ցանկութիւն առաջացաւ գիրք հրատարակելու միտքը, քանի իրանումն էի, այդպէս մտադրութիւն չունէի, նկատելով՝ գիրք հրատարակելու դժարութիւնները թէ օրէնքի եւ թէ դրամական տեսակետից, նաեւ այն համոզումն էր իմ մէջ խմորել, որ դժար թէ կարողանամ գիրք հրատարակել, քանի որ գոհողութիւնների կարիքն էր զգացում:

Ամերիկայում կեանքը տարբեր կերպարանք ունի: Մի պուճուր

Գլենդէլում տե՛ս, քանի հայկական թերթեր ու շաբաթաթերթեր կան՝ մտքերի ազատ հրապարակում եւ գաղափարների անկաշկանդ արտայայտութիւն: Այսպէս թէ այնպէս ոչ հեռու մշակութային կեանքից քաջալերած պայմաններից շարունակեցի իմ հետաքրքրութիւններս այս ասպարէզում:

Գրել եմ սկսել իրանի իսլամական վարչակարգի հաստատումի հէնց առաջին տարուց 1979 թւականից: Այդ թւականին դարձեալ հրաւիրւեցի դասաւանդելու նկատելով՝ Անթիլիասի դպրեվանքում էի ուսանել եւ ունէի ուսուցչական անցեալ, որը շարունակեց մինչեւ 2004 թւականի ուսումնական տարեվերջը: Այդ ընթացքին ուսուցչական պարտականութեանց առընթեր նուիրուեցի հասարակական գանազան ծառայութեան՝ ընկերների միասնական աշխատանքով թերթեր հրատարակելով եւ գրելով: Յօդւածներ էի խմբագրում եւ նամակներ էի ուղարկում Երեւանի «Արաքս» ռադիոհաղորդման տունը, նրանցից հատաւծներ էին կարդացում, որոնք լսելիս աւելի էի քաջալերում եւ ոգեւորութեամբ շարունակում էի իմ գրութիւնները, որոնք գնալով առօրեայ կարդացւած թերթերի պէս դիզում էին իրար վրայ, բացի այն որ երկար տարիներ դպրոցներում դասաւանդելով պահել էի ինձ մօտ այն բոլոր գրութիւնները, որ հասցէագրել էի աշակերտութեան տօների առիթով: Այսպէս Նկատելով որ գրութիւններ տարբեր ժանրի ու սեռի շատ ունեմ, զորս թե՛րանից հետս բերել էի եւ կարող էր անուշադրութան եւ մոռացութեան ենթարկուէր, նրանց միատեղելու լաւագոյն միջոցը գրքով հրատարակելը համարեցի, ճիշտ եմ արել թէ՛ սխալ, դա ընթերցողն է որ պիտի դատի ու հաստատի:

Մտադրութիւնս իրականացնելու աշխատանքի լծուեցի: Ամենակարեւորը համակարգիչն էր, որի բանեցման եւ գործածման թեքնիքին թե՛րանից ծանօթ էի: Առաջին հերթին համակարգչի պատրաստու-

Շաբ.ք էջ 19



# NEW LOOK DENTAL

DIGITAL X-RAY

**invisalign**

Ceritified

Dental Lab on Premises

Լաբորատորիան Գտնվում է Բուժարանում

---

**GENERAL & COSMETIC DENTISTRY FOR ADULTS & KIDS**

**Lousine Vahagn Kirakosian, D.D.S.** University of Southern California

- TEETH WHITENING
- PERIODONTAL TREATMENT
- PREVENTIVE DENTISTRY
- SURGICAL EXTRACTIONS
- VENEERS, CROWNS
- BRIDGES, FILLINGS
- ROOT CANAL TREATMENT
- REMOVABLE DENTURES (PARTIAL & FULL)
- DENTAL IMPLANTS
- NIGHT GUARDS

- ԱՏԱՄՆԵՐԻ ԾԵՐՄԱԿԵՑՈՒՄ
- ԲԱՐԵՐԻ ՄԱԳՐՈՒՄ ԵՒ ԼՆԴԵՐԻ ԽՆԱՄԲ
- ԿԱՆԽԱՐԳԵԼՈՂ ԱՏԱՄՆԱՐՈՒԹՈՒԹՅՈՒՆ
- ՎԻՐԱՐՈՒԹԱԿԱՆ ՄԻԶԱՄՏՈՒԹՅՈՒՆ
- ԵՐԵՍԻԶՆԵՐ ( VENEERS ), ԸՄՊԻԿՆԵՐ
- ԿԱՄՈՒՐՋՆԵՐ, ՊԼՈՄԲՆԵՐ ( FILLINGS )
- ԱՏԱՄՆԱԶՂԻ ՀԵՌԱՑՈՒՄ
- ԸՄՐԹԱԿԱՆ ԱՏԱՄՆԱԾԱՐ (ՄԱՍՆԱԿԻ ԵՒ ԱՄՐՈՂՋԱԿԱՆ )
- ԱՏԱՄԻ ՆԵՐՏՈՒՆԿ

818.478.1314

321 E. Alameda Ave. Unit J • Burbank, CA 91502

Fax: 818.842.8331 • Email: info@newlookdentalinc.com

www.newlookdentalinc.com







ՎԵՍԱՎԱԿԵ ԱՏԱՄՆԱԾԱՐԻ ԱՐԱԳ ՆՈՐՈԳՈՒՄ

### ՏԻԿԻՆ ՅԷԼԵՆ ՄԱՐՏԻԿԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ (1922-2010)

ԴՈԿՏ. ԶԱԻԿԵՆ Ա. ՔԶՆԹ. ԱՐՁՈՒՄԱՆՆԱՆ



Տարույս Օգոստոսի 4-ին 88 տարեկանին, չեռ կարճատեւ հիւանդութեան, իր մահականացուն կնքեց Բարերարուհի Տիկին Հէլէն Մարտիկեան Միշիկընի մէջ՝ շրջապատուած իր գաւակներով եւ թողնելով: Ազգային յուղարկաւորութիւնը կատարուեցաւ Տիթրոյի Ս. Յովհաննէս Մկրտիչ Հայաստանեայց Եկեղեցւոյ մէջ Օգոստոսի 11-ին, նախագահութեամբ Արեւելեան Թեմի Առաջնորդ Գերշ. Տ. Խաժակ Արքեպս. Պարսամեանի:

Հանգուցեալը տիկինն էր ազգային բարերար հանգուցեալ էտուրտ Մարտիկեանի որոնք միասնաբար բացառիկ բարերարութիւններ կատարեցին եկեղեցական, ազգային, դաստիարակչական եւ մշակութային մարզերէ ներս համազգային չափանիշով՝ արտասահմանի մէջ եւ հայրենիքի մէջ հաւասարապէս: Իրենց կարեւոր բաժին բերին նաեւ Միացեալ Նահանգացի նահանգային եւ քաղաքային նախաձեռնութեանց մէջ, պատիւով պնասատուելով ամերիկեան օտար պետական անձանց ու պաշտօնեաներու կողմէ:

Անկասկած Տիկին Մարտիկեանի կորուստը շատ ծանր կը կշռէ իր հարազատ ընտանիքին, գաւակներուն, թոռներուն եւ թոռնորդներուն, ինչպէս նաեւ բովանդակ Ամերիկահայ համայնքին վրայ: Յիրաւի՝ կորուստը ազնուագոյն տիկնոջ մը կորուստն է, որքան խոր եւ դառն, նոյնքան մխիթարական, քանի որ կորուստէն աւելի ազգային ու եկեղեցական շահն է զոր ինք իր կեանքի ընթացքին շահարկեց իր միտքով ու հոգիով՝ լիազօյն իմաստով:

Էտուրտ եւ Հէլէն Մարտիկեաններու հաստատած հիմնադրամն ու անոնց ծաւալուն բարիքները Միշիկընէն հասան Հայաստան, Տիթրոյի Ս. Յովհաննէս Եկեղեցին մինչեւ Գեղարդի վանք, ուր վանատան վերանորոգման բարերաները եղան տասնամեակներ առաջ, Երջան. վազգէն Հայրապետի օրհնութեամբ ու մեր ներկայութեան, եւ Հոգեւոր ձեմարանի աշակերտութեան ուսմանց յատուկ իրենց բարերութիւնը կատարեցին: Հաստատեցին Երուսաղէմի Հայոց Պատրիարքութեան «Մարտիկեան Թանգարանը», ինչպէս նաեւ «Մարտիկեան Գրադարանը» Տիթրոյի Ս. Հոգեւոր Հայց. Եկեղեցւոյ կից:

Տիկին Մարտիկեանի խնամքին յանձնուեցան հայ պատանիներն ու երիտասարդները որոնք ուսման յատուկ ծրագրով տարի-

ներ շարունակ Արեւելեան Թեմի Մարտիկեան Ուսումնարանին մէջ ստացան քրիստոնէական կրթութիւն: Այդ եղաւ Տիկին Հէլէն Մարտիկեանի խիստ պահանջը, ամէն բանէ առաջ՝ Քրիստոնէական դաստիարակութիւն: Իր խստապահանջութիւնը կողգար իր ուշադիր, թափանցող ու քննադատ միտքէն ու բարի հոգիէն: Իր լաւատեսութեան մէջ Հէլէն եղաւ պահանջկոտ ու ամէն ինչդրի մէջ եղաւ խուզարկու եւ իրատես:

Ձինք ճանչցանք յատկապէս Ֆլորիտայի հայ համայնքին մէջ ուր քսաներկու տարիներ առաջ կառուցեցինք Ս. Դաւիթ Հայց. Եկեղեցին: Մեր խնդրանքին վրայ, որպէս տեղւոյն առաջին հիմնադիր հոգեւոր հովիւրը, այն ատեն, Տ. եւ Տիկ. Մարտիկեաններ յանձն առին մեծագուճար նուիրաբերութեամբ ընծայելու համայնքին նորակառուց եկեղեցւոյ կից հանդիսասրահը զոր պատուով կոչեցինք «Էտուրտ եւ Հէլէն Մարտիկեան Հանդիսասրահ»: Սրահը եղաւ ժամադրապարտ աշխատանքի ձեռնարկներու ուր խուռներամ հայորդիներ եկան վայելելու կրօնական, մշակութային եւ ընկերային լայնածաւալ գործունէութիւն:

Ֆլորիտայի համայնքը եթէ այսօր առողջ է եւ գործօն, այդ մեծ մասամբ կը պարտի Տիկին Հէլէն Մարտիկեանի որ իր ձեռնադրանքով ու մշտական ներկայութեամբ, յաւելտ ժպտադէմ ու յարգալից, առաւել երջանկութիւն պարգեւեց նորակազմ համայնքին, վարժարանին ու համայնքի բոլոր անդամներուն եւ հիւրերուն:

Այսու կը յայտնենք մեր բոլորին ցաւակցութիւնը հանգուցեալ բարերարուհի ընտանեկան բոլոր պարագաներուն, աղօթելով որ Տէրը հանգիստ պարգեւէ իր հոգիին ու Ս. Հոգիի մխիթարութիւնը պարգեւէ իր հարազատներուն:

### ԱՄԵՐԻԿԱՅԱՅ ՅԵՐՈՍԻ ՍԸ ՄԱՅԸ ԳՆԴԱՊԵՏ ԳՆՐԳ (ԳԵՈՐԳ) ԳՆՍԲԱԼԵԱՆ (1914-2010)

ՅՈՎԱՅՓ ՄԵԼՈՆԵԱՆ



Կարճատեւ հիւանդութենէ ետք Վիլըմինիա Նահանգի Սէնթըրվիլ շրջանի գլխաւոր հիւանդանոցին մէջ Յուլիս 4, 2010ին մահացաւ Ամերիկայի Միացեալ Նահանգներու մայրաքաղաք Ուաշինկթընի Հայ գաղութի ակաւաւոր դէմքերէն եւ նահապետ՝ Գնդապետ ձորճ (Գէորգ) ձըսքալեան՝ 96 տարեկան հասակին մէջ: Ան իր ետին կը թողու բառասուն տախներու կողակիցը Լուսին ձըսքալեան, գաւակները Գրիգոր, Գէորգ եւ էլիսա ինչպէս նաեւ անոնց ընտանեկան պարագաները:

Գնդապետ ձորճ ձըսքալեան ծնած էր Յունիս 7, 1914ին նահապետական ու աւանդապաշտ հայ ընտանիքի մը յարկին տակ Մէսէ-չուսեց նահանգի Ֆիթչպըրի աւանին մէջ: Հայրը Գէորգ ձըսքալեան, Ամերիկա գաղթած էր Խարբերդէն երիտասարդ տարիքին, ու հոն ամուսնացած Արաբկիրէն Մարիցա Ֆէրահեանի հետ: Տեղւոյն երկրորդական վարժարանէն շրջանաւարտ ըլլալէն ետք, Գնդ. ձըսքալեան իր համալսարանական ուսումը ստացած էր Պոսթըն Համալսարանին մէջ, տիրանալով Պսակաւոր Արուեստից վկայականին՝ Լրագրական ճիւղին մէջ: Միաժամանակ ան

չին Պատերազմի, Գորէայի ինչպէս նաեւ Վիեթնամի պատերազմներուն: Երկրորդ Համաշխարհային Պատերազմին գերի բռնուելով Գերմանական զինեալ ուժերուն կողմէ, Գնդ. ձըսքալեան 27 ամիս արգելափակուեցաւ գերիներու յատուկ գորակայաններու մէջ նախ Թունիզիա, ապա Իտալիա, Գերմանիա եւ ի վերջոյ Լեհաստան:

Երկրորդ Համաշխարհային պատերազմի աւարտին Գնդ. ձըսքալեան պաշտօնի կոչուեցաւ Զօրավար Տուայտ (Այք) Այգընհաուրի (յետագային Ամերիկեան Մի-



ամբողջացուցած էր պահեստի ուժերու սահմանուած զինուորական ծառայութեան շջանը ու իբրեւ ենթասպայ կամաւոր կերպով անդամակցած էր այդ շրջանի պահեստի գորաբանակին: Թէեւ Գնդ. ձըսքալեան կը փափաքէր իր մասնագիտական ուսումը ամբողջացնել փաստաբանական մարզէն ներս, ընտանեկան պարագաներ ստիպեցին իրեն ժամանակով մը յետաձգելու այդ ծրագիրը: Միաժամանակ այդ շրջանին համոզուած ըլլալով որ Ամերիկայի Միացեալ Նահանգները (ԱՄՆ) անխուսափելիօրէն պիտի մասնակցէին Դաշնակիցներու կողքին Հիթլերական Գերմանիոյ դէմ մղուած համաշխարհային պատերազմին, ենթասպայ ձըսքալեան կը միանան Ամերիկեան բանակին իբրեւ գործօն տարր ու կը հետեւի ծրագրեալ մարզումներուն՝ իրեն սահմանուած պատասխանատուութիւնները ստանձնելու համար:

Այնուհետեւ Գնդ. ձըսքալեան 30 տարի անդադար ծառայեց ԱՄՆի բանակի շարքերէն ներս մասնակցելով Երկրորդ Համաշխարհա-

պեալ Նահանգներու Նախագահ) հրամանատարութեան պատկանող Փենթակոնի քարտուղարութեան մէջ ու զանազան ծառայութիւններ մատուցեց բանակին մէջ նախ Գորէայի (1952-1953) ապա Վիեթնամի (1963-1964) պատերազմներուն՝ գործօն մասնակցութիւն բերելով մարտական գործողութեանց: 1957-1958 տարիներուն Գնդ. ձըսքալեան իբրեւ Ամերիկեան զինուորական խորհրդատու ծառայեց Պարսկաստանի Կայսերական բանակի հրամանատարութեան մօտ ու յետագային կարեւոր պաշտօններ վարեց զանազան Ամերիկեան ռազմական յաններէ ներս:

Իր երկարատեւ զինուորական ծառայութեան ընթացքին Գնդ. ձըսքալեան արժանացաւ զինուորական բազմաթիւ պատիւներ եւ համապատասխան շքանշաններու՝ պատերազմի դաշտին վրայ իր ցոյց տուած արիւթեան եւ կատարած հերոսական արարքներու համար: Այս բարձր շքանշաններուն կը

**ՎԱՐՁՈՒ ՄՐԱՇ ՓԱՍՏԻՆԱՅԻ ՄԷՋ (200 ՀՈԳԻ ԸԱՄԱՐ)**  
**ԱՄԵՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹԵՐՈՒ ԸԱՄԱՐ**  
**1060 N. ALLEN AVE. PASADENA ԵՆՈԱՉԱՅՆԵԼ (626) 797-7680**

ՅՈՒՇԵՐ

ԻՍ ԱՆՑԵԱԼԻ ՕՐԵՐԻՑ

ԱԻՑԻՍՆԱԶԱՐԵԱՆ

1936 թուականին Իրանի Սուլթանաբադ (այժմ Արաբ) քաղաքի մօտ գտնուող Ազնա գիւղում ապրում էին շուրջ 156 ընտանիքներ 1015 շունչ:

Գիւղի բնակիչների կէսից աւելին հայեր էին: Ազնա գիւղի հայերը շատ քաջ ու համարձակ էին: Հայերը իշխում էին ամէնուրեք եւ ամէն մի գործի մէջ առաջին շարքերում էին: Գիւղատէրը հայերին լաւ էր նայում, որովհետեւ մերոնք աշխատունակ էին: Գիւղատէրերը ընդհանրապէս արդարամիտ եւ յարգուած մարդիկ էին: Մենք հայերս ամենափոքր դժուարութիւն եւ կամ դժգոհութիւն ունենալու դէպքում դիմում էինք գիւղատիրոջ:

Տեղացի պարսիկները շատ լաւ էին վերաբերում հայերի հետ: Այդ բոլորը եղաւ շնորհիւ նուիրեալ հոգեւորական խորհն Վարդապետի, որի անունն ու հմայքը վաղուց տարածուած էր շրջակայ հայաբնակ գիւղերում եւ քաղաքներում: 1918 թուին Արեւմտեան Հայաստանից գաղթած մի խումբ ուսուցիչներ, որոնք հայոց լեզուի դասընթացներ էին կազմակերպել որոշում են ժողովրդին ծանօթացնել հայ թատրոնը, բայց գիւղում սրահ չկար: Մեծ սենեակ էլ չկար որ օգտուէին այդ սենեակից: Ծխատէր քահանաները խորհրդակցելով եկեղեցական վարչութեան անդամների հետ, որոշում են թոյլատրել որ թատրոնի բեմադրութիւնը տեղի ունենայ եկեղեցում: Ամբողջ աշխատանքները կատարուեցին:

Եկեղեցու խորանը ծածկուեց վարագոյնով եւ իրերը փոխադրուեցին ուրիշ վայր: Թատրոնի մասին յայտարարութիւններ են տարածում եւ բեմադրութեան վայրն էլ նշում են Ազնայի հայոց եկեղեցին: Վերջապէս եկեղեցում թատրոնի բեմադրութեան լուրը հասնում է Սպահան, Նոր Զուղայի վանքը: Ի դէպ այն տարիներին Թեհրանը դեռ թեմ չէր եւ Իրան-Հնդկաստան թեմերը ղեկավարում էին Զուղայում հաստատուած հոգեւոր առաջնորդի կողմից: Սրբազանը գայրաւնում է քահանայ հայրերի այս արարքի համար եւ պատգամ է դրկում Ազնա գիւղ եւ հրահանգում որ Տէր Մամբրէն եւ Քալաւա գիւղի Տէր Արսէն քահանաները անմիջապէս ներկայանան Զուղայի առաջնորդարան: Երկու քահանաները անմիջապէս մեկնում են Զուղա եւ ներկայանում Սրբազանին: Սակայն Սրբազանը նոյն օրը կարեւոր գործով մեկնում է Թեհրան, կարգադրելով որ քահանաները մնան առաջնորդարանում, մինչեւ իր վերադարձը: Յաջորդ օրն իսկ գիւղից տեղեկացնում են որ ննջեցեալ կայ, քահանաները անմիջապէս պիտի հասնեն գիւղ: Ուրիշ էլք չկար: Հոգեւոր հայրերը մեկնում են գիւղ, թաղման կարգը կատարում ու նորից վերադառնում են Զուղա: Յաջորդ օրը կրկին գիւղից պահանջում են Զուղա եւ վերադարձը, մինչեւ Սրբազանի վերադարձը: Իմանալով եղելու թիւնը նա զննատու է քահանաների ընթացքը, որոնք բաւական երկար տարածք կտրելով, դժուարին պայմաններում գնացել են գիւղ եւ վերադարձել են, միշտ հաւատարիմ մնալով իրենց կոչումին, ներում է շնորհում եւ պատուիրում որ եկեղեցին չօգտագործել թատրոնի համար, համարելով դա սրբապղծութիւն:

\*\*\*

Այս եւ նման երեւոյթներ մտաբերելիս, փորձում ես համեմատել այն օրերին մեր հոգեւորականների կեցուածքը եւ մօտեցումները, կարգապահութիւնը, պատասխանատուութեան խորը ըմբռնումը, այս օրերի հետ: Դժբախտաբար մեր օրերում պակասում է յարգանքը իրարու հանդէպ: Հոգեւոր շատ քիչ պաշտօնեաներ այսօր արժեւորում են իրենց սքեմը եւ մասամբ անուշադրութեան են յանձնում իրենց հոգեւոր եւ սրբազան առաքելութիւնը: Հայոց առաքելական եկեղեցիներում նկատելի են այնպիսի երեւոյթներ որոնք երբէք հարգատք չեն մեզ: Էլ չենք խօսում աղանդաւորների աղօթատեղիներում կատարուող շոյի եւ այլանդակ երեւոյթների մասին, որոնք պղծում են կրօնական-ազգային սրբութիւնները...

Աւելի քան չորս դար, մէկ բուռ հայեր, որոնք ուժով բնակեցուած են եղել Իրանի Լոռեստան նահանգում գտնուող լեռնային գիւղերում, դարեր շարունակ պահել են իրենց Քրիստոնէական հաւատամքը եւ հաւատարիմ են մնացել իրենց սրբութիւններին: Այդ երանելի տարիներին, քահանաները եւ ընդհանրապէս հոգեւոր դասին պատկանող անձինք, բացառիկ սէր եւ յարգանք էին վայելում ժողովրդի կողմից: Նրանց խօսքը օրէնք էր մեզ համար: Նրանք էին տնօրինում մեր ճակատագիրը: Ժողովրդի մէջ ծագած ամէն տեսակ վէճ եւ անհամաձայնութիւն, վերացում էր հոգեւորականների միջնորդութեամբ եւ որոշումով: Տեղացի բնակիչները որոնք պատկանում էին Լոռ ցեղին, խոր յարգանք ունէին մեր կրօնի հանդէպ: Երկիրը անթեմութեամբ էին մօտենում մեր եկեղեցիներին, եւ երբեմն մասնակցում էին կրօնական արարողութիւններին: Պատահում էր մինչեւ իսկ եկեղեցում հաղորդուում էին քահանայի ձեռամբ: Ահա այնպիսին էր կացութիւնը սրանից 60-70 տարիներ առաջ, Իրանի հայաբնակ գիւղերում եւ քաղաքներում:

Երանելի տարիներ:

ԻՐԱՆԱՅԱՅՈՒԹԵԱՆ ՆՈՒԷՐԸ ՀԱՅ ԳԻՒՂԱՅՈՒՆ

ԱՐՄԻՆԷ ՄԵԼԻՔ-ԻՍՐԱԵԼԵԱՆ

Հայաստանի գիւղատնտեսութեան մէջ նոր բանջարաբոստանային կուլտուրաների, մշակաբոյսերի եւ մրգատու ծառատեսակների աճեցումն ու զարգացումը առկայ է, անկախ զարգացման փոքր ծաւալներից: Բնական պայմանները՝ հողի բերրիութիւնն ու կլիման նպաստաւոր նախադրեալներ են հանդիսանում հանրապետութեան առանձին մարզերում, որոնց ուսումնասիրութիւնը յանգեցրել է իրական եւ գործնական ձեռնարկումների գիւղատնտեսութեան ոլորտում նոր մրգատեսակների մինչեւ մէկ տարեկան, արմատակալած տնկիւնների ներկրմանը: Յատկանշական է որ վերջերս Իրանի Իսլամական Հանրապետութիւնից Հայաստան ուղարկուած բարեգործական ընձան՝ հարկւրաւոր մրգատու ծառերի տնկիւններ առաքումը, որ իրանահայ համայնքի նուէրն է հայ գիւղացուն: Իրանական մրգերի այգիներ ստեղծելու մտայղացումը՝ Իրան Հայաստան բարեկամութեան միութեան կողմից ամիսներ առաջ մշակուել էր եւ տեղի հայկական «ՅՈՅՍ» պարբերականի միջոցով յայտարարուել էր դրամահաւաք՝ մէկ տնկին 3000 թուրքական արժէքով:

Արձագանքը չուշացաւ, սպասելիքներն արդարացան:

Իրան-Հայաստան բարեկամութեան միութեան նախագահ, ազգային գործիչ Լեւոն Ահարոնեանի անձնական ներդրումը նշանակալիօրէն նպաստեց դրամահաւաքի աշխուժացմանը, որը տեղի հայութեան մէջ բխում է հայրենիքի կայացման ճանապարհին իր նպաստն ու մասնակցութիւնն ունենալու ազգաշահ մօտեցումից:

ՀՀ գիւղատնտեսութեան մէջ լուրջ ներդրումների աւելացումը կարեւորելով «Մրգատու տնկիւններ Հայաստանին» նախաձեռնութեան իրականացող, բարերար Լեւոն Ահարոնեանի համոզմամբ՝ Հայաստանի գիւղատնտեսութեան զարգացման մէջ է մեր երկրի առաջընթացներից մէկը, որ լուրջ ներդրումների լայն դաշտ ու հնարաւորութիւններ ունի, տեղական շուկան զարգաց-

նելու խնդիրը բխում է Հայաստանի ժողովրդի շահերից, զարգացած տնտեսութիւն ունեցող գիւղը կարող է նոր արտադրութեան հիմքեր ստեղծել, որ անշուշտ շահաւէտ է թէ արտադրողի, թէ վերամշակողի եւ թէ սպառողի համար:

ՀՀ գիւղատնտեսութեան նախարարութեանը յանձնուած նուէրը ըստ նախօրօք որոշուած եւ հաստատուած ծրագրի ընթացքում կը հասնի հայ գիւղացուն եւ ինչ պէս հաւաստիացրեց փոխ նախարար Գալուստեանը, տնկիւնները իրենց հասցէատէրերին կը տրամադրուեն անվճար: Մարզերի գիւղական համայնքներին ծառերի բաշխման իրաւունքը՝ նախաձեռնողները վերապահել են ՀՀ գիւղ նախարարութեանը, այս նուիրատուութեան ցանկում է նաեւ Լեւոնային Չարաբաղի գիւղական տնտեսութիւններից: Մրգատու տնկերի որոշակի քանակ է տրամադրուել նաեւ Հայաստանի դպրոցներին, որոնց տարածքում գտնուող պուրակներում ծառատունկեր են կազմակերպուել:

Պարոն Գալուստեանն անձամբ կարեւորելով այսպիսի նախաձեռնութիւնը եւ շնորհակալութիւն յայտնելով իրանահայութեանն ու այս նախաձեռնութեան մեղաւորներին՝ յոյս յայտնեց, որ տարիներ յետոյ հայկական շուկան կը հարստանայ Հայաստանում աճող եւ հայկական արեւ ի համն ու հոտը կրողնոր մրգատեսակներով, որոնց բերքատուութիւնը մեր բնակլիմայական պայմաններում խոստանում են բարձր տոկոս եւ որակ ապահովել նրանց ճիշտ աճեցման, մշակման եւ խնամքի դէպքում, որն առանձնակի տարբերութիւններ չի կրում իր մէջ Հայաստանում աճող աւանդական մրգատու ծառերի աճեցման համեմատ:

Մնում է ակնկալել բանիմաց ու բարեխիղճ գիւղատնտեսների խորհուրդներն ու բնութեան բարեհաճ վերաբերմունքը, ինչը 2010-ի գարնանը անակնկալի բերեց գիւղացուն՝ կլիմայական կտրուկ փոփոխութիւնների ու ցրտահարած մրգատեսակների, բանջարաբոստանային որոշ կուլտուրաների մասսայական եւ կիսով չափ ոչնչացմամբ:

BURBANK AIRPORT BID REQUEST

Bid Request General Contractors Qualified "B" licensed General Building Contractors are invited to submit a sealed bid on Project E10-21, Module 12.3 to the Burbank-Glendale-Pasadena Airport Authority by 2:05 PM, September 22, 2010. The Work includes, but is not limited to, the following: Installation of new doors, new windows, air conditioning, insulation and correction of some code deficiencies for 31 Single Family homes. Bidders may obtain construction documents from the Bob Hope Airport Web Site at bobhopeairport.com under Business Opportunities and are encouraged to do so prior to the mandatory pre-bid conference. All Bidders shall register with the Airport Engineering Department either via web site or in person. Bids submitted by firms who have not registered with Airport Engineering will be considered non-responsive. A mandatory Pre-bid conference has been scheduled for September 8, 2010, at 10:00 A.M. at the Bob Hope Airport Engineering Offices, 2800 N. Clybourn Ave., Burbank, California.

Ձեր Ծանուցումները Վստահեցէք «Մասիս» Շարաքաքերիին T: (626) 797-7680 F: (626) 797-6863 massis2@earthlink.net

# ՄԱՐԴՈՒ ՄԱՐՄՆԻ 4 Ձ Ա Յ Ն Ե Ր Ը

# ԳԻՐՔԸ ԼՈՒՍՈՅ ԱՂԲԻՐ

Մարդու մարմինը վաղուց, կամ առելի ճիշտ է ասենք, արուեստի յեղափոխութեան ժամանակներից սկսած նմանեցրել են մի արտադրական գործարանի, որն իհարկէ շատ էլ սխալ չէ: Չնայած, որ մարդու մարմինը շատ առելի բարդ կառուցուածք ունի՝ մի գործարանի համեմատութեամբ, այդուհանդերձ դա շատ է օգնում հասկանալու մարդու օրգանիզմի բարդ ու բարձրարժեքի կառուցը:

Ընդհանրապէս մի արտադրական գործարանում ղեկավար ու վերահսկող բաժինը տեղակայուած է մի հանգիստ ու հանդարտ վայրում, ճիշտ այնպէս, ինչպէս մարդու օրգանիզմում է: Մարդու ուղեղն էլ պարզապէս հսկող ու ղեկավարող կենտրոն է, եւ իր աշխատանքը կատարում է շատ հանդարտ ու խաղաղ:

Արտադրող գործարանի այն բաժինները, որտեղ օգտագործուած է օդը կամ որոշ գազեր, եւ նոյնիսկ ջուրն ու նախնական հում նիւթը, աշխատում են ձայնաւ որ սարքերով, նոյնը եւ մարդու մարմնում է օր ու գիշեր կա տարուած, այն օրգանները, որոնք օգտուած են մարմնի պահանջած հում նիւթերից (ուտելիքներից), որոշ չափով աշխատում են աղմուկով: Մարդու մարմինը չորս տեսակ կարեւոր ձայներ է արտադրում, որոնց արտադրավայրը վերջը վար նկատի առնելով՝ փուշտալ, հազալ, բոկալ եւ մարտդական օրգանների արտադրած գազի արտանետման ձայներն են:

Հարկաւոր է մի փոքր խորանալ, որպէս զի կարողանանք հասկանալ այդ «հաճելի» ձայների օգտակարութիւնը եւ նրանց կարեւորութիւնը մարդու կեանքում:

### Հազալ

Հազալն իրականում ուժեղ եւ ձայնով ուղեկցուող արտաշնչում է, որն առաջանում է ձայնալարերի ծալքերի յանկարծակի բացուելուց՝ շնչառական անցքերի ստորին հատուածը մաքրելու հետեւանքով (կոկորդն): Հազալու ընթացքում արտանետուող ճնշուած օդի հոսքի արագութիւնը կարող է մինչեւ 1000 կմ ժամում հասնել:

Ուժեղ հազը նոյնիսկ կարող է մարդու կրծքավանդակի կողակերքը կոտորել: Հազը համեմատ տելով փուշտալու հետ, կարելի է ասել, թէ փուշտալն առելի կառա վարելի է, քան հազը, քանի որ այն կարելի է գապել եւ կամ առելի ցածր ձայնով փուշտալ, այսինքն՝ գոյացած ձայնը խեղդել, բայց նման կերպ չի կարելի վարուել հազալու դէպքում, հազը պարտադիր է: Իզուր չէ, որ ասում են՝ «Եր կու բանը հնարաւոր չէ թագցնել» հազն ու յաղթութիւն նր»: Հազն ունի երկու տեսակ չոր եւ թաց: Հիմնականում չոր հազը կոկորդի գրգռումից է գոյանում եւ դա առանց խորխի է լինում: Թաց հազը մարմնի առելի ստորին մասից է սկսուած եւ դա թոքերի մէջի խորխերի շարժումից է լինում: Վստահաբար առանց հազալու այս մեխանիզմի հնարաւոր չի լինի թոքերի բորբոքումն եւ բրոնխիտը բուժել, ուստի հազը ոչ թէ անհանգստութիւն պատճառող ազդակ է, այլ հանգստացնող եւ բարեբեր՝ մարմնի բնական մի բուժամիջոց:

### Փռչալ

Փռչալը՝ անգլ բռն sneezing, հնդեւրոպական արմատ ունի:

Փռչալը ներշնչած օդի արագ եւ յանկարծակի քթից դուրսնետուելն է: Այդ գործողութիւնն սկսուած է շնչափողից մինչեւ քիթը, եւ

նպաստում՝ շնչառական ուղի ներքի մաքրմանը: Այն միտեսակ պաշտպանողական եւ ազդարար ընդ դեր է կատարում՝ հաւանական արտաքին խանգարիչ եւ վնասա կար տարրի դէմ: Դա կարող է առաջանալ նաեւ ալերգիկ տարրի ազդե ցութեամբ, որը շնչուղին շարու նակ գրգռելով՝ անդադար փուշտոց ներ է պատճառում, եւ այդ կերպով մեզ ուղորդում դէպի բժշկի կայինետը, որտեղ ակնկալում ենք փրկուել այդ սրած ու խանգարիչ երեւոյթից:

### Բխկալ

Բխկալը փորում հաւաքուած օդի յանկարծակի արտանետումն է բերանից է, եւ կարելի է ասել, որ դա փորի կամ մարտդական մի տեսակ հազ է: Ուտելու, խմելու եւ կամ խօսելու ընթացքում մարդ անընդհատ օդ է կուլ տալիս, որը անցնում է ստամոքսի մէջ: Ուտելիքը մարսելու ընթացքում եւս գազեր են գոյանում, որոնք թեթեւ լինելով հաւաքուած են վերին մասում եւ ճնշելով բացում ելքը դէպի վեր, եւ բերանից դուրս նետուած ձայնով՝ բխկալու ձայնով: Այս պարզ գործողութիւնը եւս ան չափ օգտակար է մարմնի համար, քանի որ եթէ այդ գազերն ստամոքսից դուրս չգան, մարդ կարող է նրանց ճնշման տակ կորցնել մտքի կենտրոնացումն ու մտածելու կարողութիւնը: Սա է պատճառը, որ բխկալուց յետոյ մարդ հաճելի հանգստութիւն է գգում:

### Մարտդական գազերի արձակումը

Աղիներից գազերի արտանետումը նոյնպէս կատարուած է ձայնի ուղեկցութեամբ, որը նշուած մեզ ծանօթ ձայներից մէկն է: Դա բժշկագիտութեան մէջ կոչուած է flatulence, որի արմատը լատինական flatus բառն է, եւ որ նշանակում է «քամի»: Մարդու 6 մետրանոց աղիքներում անընդհատ գոյանում են գազեր, որոնք երբ շարժուելով հասնում են ելքին, ճնշման տակ ու յաճախ ձայնով հեռանում են մարդու մարմնից: Այդ ձայնի ուժգնութիւնը կապուած է ուտելիքի որակին ու չափին եւ արտանետման ժամին, եւ այդ տարբեր ձայները մի փոքր էլ երաժշտական բնոյթ են ստանում: Աղիքներից արտադրուած գազերի հոտն էլ տարբերում է ըստ կերած ուտելիքի, եւ բժշկութեան մէջ այդ հոտերը առանձին անուն ու բացատրութիւն ունեն: Փորի քամին արձակելը՝ շնայած, որ հասարակական տեսանկիւնից անընդունելի է ամօթալի արարք է, բայց կենսաբանական առումով դա ոչ մի այն ընդունելի, այլեւ չափազանց կարեւոր ու անհրաժեշտ է, քանի որ եթէ այդ գազերն աղիքից դուրս չգան, կարող են դրանց փակման պատճառ դառնալ, որի հետեւանքով վնասուելով աղիքն էր, այնպիսի բորբոքում կ'առաջանայ, որ չափազանց վտանգաւոր է: Դա կարող է մահաբեր լինել: Մի խօսքով մարդու մարմինը պիտի ազատել այդ կարգի գազերից, եթէ ոչ հնարաւոր է, որ ստիպուած լինենք, մարդու ողջ մարմինը հողին յանձնել:

Ինչպէս երեւում է, մարդու մարմնից բխող այս չորս տեսակ ձայները մարմնի կենսաբանական երաժշտութիւնն են կազմում:

Այս ձայների արձակումը մարդու կեանքի մի մասն է կազմում, իսկ թէ ինչպէս դա կախուած է նրա բնաւորութիւնից ու միջավայրից: Թարգմանեց Լ. Ահարոնեանը

### Շարունակուած էջ 13-էն

Թիւն տեսայ, հօրեղբօրս տղան վաղուց իր գրասենեակի գործածուած համակարգիչներից եւ տպիչներից մէկը նուիրեց ինձ: Ընտանիքս՝ Հինգ հոգով, մէկ սենեականոց յարկաբաժնի մէջ էինք ապրում Colorado-ի Lincoln փողոցում, տեղներս արդէն շատ նեղ էր, մէկ հոգի եւս աւելացաւ մեր կազմին, դա իմ համակարգիչն էր իր սեղանիկով, մեր այս Ամերիկեան One bed room յարկաբաժնում:

Գրքի պատկերացումը հանց բողբոջ արեւի էր սպասում՝ իմ աշխատանքին, որի համար աննահանջ առաջ էի գնում, նրա աշխատանքներին առնթեր նաեւ իմ գրութիւններով աշխատակցում էի տեղույս մի քանի թերթերի հետ:

Վերջապէս իմ համեստ ունակութիւնների շնորհիւ լոյս տեսաւ գիրքը՝ «Մեր կեանքի ուղին դէպի»: Գրքիս բովանդակ նիւթերը ներշնչանքն է մեր Իրանեան հայկական կեանքի նիստ ու կացից, ուսուցչական եւ դպրոցական կեանքից, Արցախի պատերազմից, այն մահու եւ կենաց օրերը, որ մի պուճուր հայերը հերոսական կուր էին մղում գեր սպառազինուած թշնամու դէմ: Արցախի հէնց էն կուրների առաջին օրից լարուած վիճակում զօր ու գիշեր ականջներս սրած, մեր միտքն ու ուղեղը նրանով տարուած սպասում էինք մեր ազատամարտիկների յաղթական լուրերին, ոչ թէ միայն ես այլ՝ իմ շրջապատը, թեհրանահայութիւնը, Իրանահայութիւնը եւ ամբողջ հայութիւնը անկասկած:

Գիրքս լոյս տեսաւ եւ դրուեց հանրութեան դատողութեան: Իմ նպատակն էր՝ հայրենադարձութեան քաջալերանք դառնալ, հայրենիքում կայք հաստատել, փրկուել նժդեհութեան հոգեկտանքից, արժանաւորութեամբ մեր երկրում ապրելու եւ սերնդագործելու, եթէ բացի սա եղաւ, գիտե՞ք որ օտար հորիզոններում՝ շուտ թէ ուշ մեր սերունդները ուժանալու են:

Իրանահայ միութեան գրադարանում կը սեղանի շուրջ քննարկուեց գիրքը, հանգամանօրէն խօսուեց նրա թեր եւ դէմ բովանդակութեան մասին:

Նկատելով որ արդէն իսկ գրքի երեք հարիւրանոց էջերի պատրաստ նիւթեր ունեմ, որոնք գրեթէ թերթերում տպուել են, յամենում անիմաստ համարեցի: Գրողին չի բաւարարում եւ չի համոզում իր գրութիւնները թերթերում մնան ցաք ու ցրիւ, լաւ թէ վատ ցանկութիւն կայ գրքի տեսքով հրատարակել, մտածող մարդի համար անհրաժեշտութիւն է իր մտքերն ու յոյզերը հասարակութեան ներկայացնել, ինչպէս հացթուխի նպատակն է, որ եփած հացը յաճախորդին հրամայի:

Ուշադրութիւն չդարձնելով քննադատական եւ յուսահատեցնող խօսքերին երկրորդ գրքիս նիւթերը համակարգչային դասաւորման ձեռնարկեցի, այլեւս ոչ ժամ էի ճանաչում եւ ոչ զօր ու գիշեր, շարունակ աշխատում էի որպէսզի կարողանամ նախքան Պարսկաստան գնալս գիրքը հրատարակ հանել եւ հետս տանել:

Երկու ամսից գիրքս պատրաստուեց:

Շաբաթ էր, ապրիլ 5, դրանով հանդերձ որ չէի աշխատում, առաւօտեան մէկ տուփ նոր հրատարակուած գրքերիցս հետս առած աշխատանքի վայր գնացի, յանձնելիք

գրքերի վրայ մակագրեցի, այն ինչ որ ենթակային պատշաճում էր, սպա անցայ իրանահայ միութեան գրադարանը, ուր նաեւ գրքերիցս նւիրեցի: Շապիկի եւ գրքի խորագիրը՝ «Կեանքի խճանկարներ» բոլորի հաւանութեան արժանացաւ, մնաց բովանդակութիւնը կարդան եւ իրենց տեսակէտը յայտնեն:

Ներսէսի հետ խորհրդակցելով որոշուել էր իմ «Կեանքի խճանկարներ» երկրորդ գրքի քննարկումը կատարուել իրանահայ միութեան գրադարանում: Արդէն ողջ շաբաթը այդ մտքով էի տարուած, թէ՛ ինչ ծրագիր գործադրել, որ յարմար եւ պատշաճ լինի գրքի ներկայացման համար:

Մայիս ամիսն է, Մայիսը գեղեցկութեան, վարդերի եւ ծաղկունքի ամիս է, Մայիսը կոչուած է՝ գեղածիծաղ, քանի որ մի քանի ազգային տօների տօնական շուրջով հանդէսներ է տեղի ունենում, ինչպէս՝ Վարդերի տօնը ի յիշատակ Մայիս Նովայի, մայրերի տօնը, Հայաստանի անկախութեան տօնը, Արցախի ազատագրութեան եւ այլ տօներ: Շաբաթ Մայիս 3-ն է, պայծառ արեւ, զով ու հաճելի օդ, տնից դէպի Իրանահայ միութիւնն եմ գնում, գրքիս առիթով հանդիպման ներկայ գտնուելու, յուշ ու միտքս այդ ուղղութեամբ է աշխատում, մի տեսակ երկմտանք է պատել ինձ, նեղում է այս միտքը, թէ՛ չլինի շատ ամանչացնեն ինձ, ամօթից ինչ պիտի անեմ, առաջին գրքիս քննարկման համար այսքան տաղանապ չունէի՝ մինչ այս մէկինը:

Առաւօտեան ժամը 11.30-ն է: Գնածս քաղցրաւենիքը, խմիչքը եւ թխուածքը տապալկներում ներս եմ մտնում Միութեան գրադարանին կից սենեակը, տեսնելով սեղանը բոլորած բազմամարդ ունկնդիրները, որոնց ներկայութեամբ պիտի քննարկուի՝ «Կեանքի խճանկարներ» գիրքը, այլայլուած եմ, դարձեալ նոյն մտահոգութիւնը յուզում է ներքինս, միանում եմ նրանց սպասելով:

Շարժառիթի մասին Ներսէսը հակիրճ բառերով տեղեկացնում է: Խորհրդաւոր լրջութեամբ հետեւում են բոլորը:

Գրքիս մասին իրենց գնահատութիւնը կատարեցին գրքերի հեղինակ՝ Ազատ Վեհունի, պատմաբան Յովիկ Ներսիսեան, արձակագիր Խորէն Արամունի, արձակագիր Զանիբէկ Զանիբէկեան, բանաստեղծ Երուանդ Իսկեանդարեան եւ յարգելի ուրիշներ:

Ուշադրութեամբ եւ ակնածանքով լսեցի իւրաքանչիւրի համոզումներից բխած խօսքը գրքիս կապակցութեամբ, շնորհակալ եմ գնահատականների եւ մատնանշած թերացումների համար: Անաչառ եւ կառուցողական մօտեցումները հարցերին երաշխիք է յառաջադիմութեան: Այսպիսի հոգեկան առկայութիւնը կեանքի տարբեր բնագաւառներում ի մասնաւորի մեր հայաստանեան քաղաքական դաշտում՝ մեր երկիրը դէպի հզօրագում կը տանի եւ ժողովրդին բարօր կեանքի ուղիները կ'առաջնորդի:

Գիրքը՝ «Կեանքի խճանկարներ» խորագրով կարելի է ասել՝ պատշաճում է բովանդակութեան տարբեր թեմաներ ընդգրկելով:

Գիրքը ներկայացուած է հանրութեան, դա իմ համեստ աշխատասիրութիւնն է: Մնում է ընթացողը կարգայ եւ արդարացիօրէն իր գնահատականը տալ:



### ՄԱՐԱԶԴ



ՊԵՍԻԼԻԱ ՊԵՍՈՍ  
Ծնեալ 1931, Լիբանան

Սրտի դառն կսկիծով կը գուժենք մեր սիրեցեալ հօր, մեծ հօր, եղբոր եւ հարազատին՝ Պեսիլիոս Պեսոսի մահը, որ պատահեցաւ Հինգշաբթի, Օգոստոս 12, 2010ին՝ յետ կարճատեւ հիւանդութեան:

Յուզարկաւորութեան արարողութիւնը տեղի ունեցաւ Երկուշաբթի Օգոստոս 16, 2010, առաւօտեան ժամը 9:30ին, Hollywood Hills, Forest Lawn գերեզմանատան church of the Hills ձերմակ մատուան մէջ:

**Սգակիրները՝**

- Զաւակը՝ Ալէքս եւ Թալին Պեսոս եւ զաւակները
- Զաւակը՝ Քիրա եւ Արա ձիւճիւլեան եւ զաւակները
- Դուստրը՝ Սանտրա Պեսոս
- Եղբայրը՝ Յակոբ եւ Քաթլին Պեսոս եւ զաւակները (Սկովտիա)
- Քոյրը՝ Ռոզին Քասապ եւ զաւակները (Լիբանան)
- Քոյրը՝ Մարի եւ Ժատ Քարամ եւ զաւակները (Լիբանան)
- Աներձագը՝ Արամ Գուլումճեան եւ զաւակը վիզէն (Լոնտոն)
- Տիկնոջ քոյրերը՝ Կապի եւ Ժանէթ Տաղլեան եւ զաւակները (Լոնտոն)
- Պերճ եւ Սոնա Գալալճեան եւ զաւակները (Ֆրանսա)

Եւ համայն հարազատները, ինամիները, բարեկամները եւ ընկերները: Փոխան ծաղկեպակի նուիրատուութիւնները կը խնդրուի կատարել Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան կամ Պէյրութի Հայ Աւետարանական Գոլէճին:

### ՅԱԿՎԱԿԱՆ

ԼՈՒՍԻՆ ԽՈՏԱՆԵԱՆԻ մահուան տխուր առիթով Տէր եւ Տիկ. ձորճ Գուգուեան իրենց խորագգաց ցաւակցութիւնները կը յայտնեն համայն Խոտանեան ընտանիքին եւ հարազատներուն եւ առ այդ \$100 տոլար կը նուիրեն «Մասիս»ին:

## ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ

ՀԵՌՈՒՍՏՍԵՍԻԼԻ ՅԱՅՏԱԳԻՐԻ  
ԺԱՄԱՆԱԿԱՅՈՅՑԸ

CHARTER CABLE 280-ԲԳ ԿԱՅԱՆ

(ԿԼԵՆՏԵՅԼ, ՊԸՐՊԵՆՔ, ԼԱ ՔՐԵՍԵՆԹԱ)

GLOABCAST SATELLITE

ՀԻՆԳՇԱՐԹԻ ԵՐԵԿՈՅԵԱՆ ԺԱՄԸ 10:00-11:00

### ՔԱԶ ՆԱԶԱՐ

### ՈՒՂԻՂ ԵԹԵՐ ՇՕ

Ամէն Կիրակի երեկոյեան ժամը 10:00-ից 12:30  
Կլէնտլի 380-րդ կայանից

### ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ

Եթէ ձեր տրամադրութեան տակ ունիք հայերէն գիրքեր, եւ կը ցանկանաք զանոնք նուիրել Կայծ Երիտասարդական Միութեան գրադարանին՝ հաճեցէք կապ պահել մեզի հետ:  
G.Y.O. 1060 N. ALLEN AVE. PASADENA, CA 91104  
Norserount@sbcglobal.net

### ԳՐԱԿԱՆ ԵՐԵԿՈՅ

Շարունակուած էջ 13-էն

ներկայացուեց 2005 թ. Ս. Թութճեանի հրատարակած գիրքը՝ «Արեւը լեռան ետին»: Յանկութիւն եղաւ նորեկները շարունակաբար իրենց մասնակցութիւնը բերեն: Նախագահն ողջունեց ՀԳՄ հիգերորդ համագումարից վերադարձած մեր գրող անդամներից՝ Նիկոլայ Ստեփանեանին եւ Խորէն Արամունուն: Նաեւ բարի գալստեանն ողջունի խօսք աւանդ Պօղոս Գիւլպէլեանին դէպի Հայաստան ճամբորդութիւնը եւ իր նոր վիպակի՝ «Այն միւս փողոցը» գրքի շնորհանգէսը եւ պարգևատրումը: Ներկաներին տեղեկացուեց ՀԳՄ գրական թերթի շաբաթական առաջման մասին, ցանկացողներին առաջարկեց արձանագրել իրենց էլնամակի հասցէն ներկայացնելով:

Ազատ բեմի հանդիսավար բանաստեղծ եւ գրականագէտ Գէորգ Քրիստինեանը իր ողջունի խօսքում կարեւորեց հայ մշակութի եւ գրականութեան պահպանումը եւ հարստացումը, նաեւ ցանկութիւն յայտնեց գրողները իրենց ստեղծագործութիւններով երեւան գան միջազգային գրական ասպարէզներում:

Այո՛, սա բոլորիս իղձն ու փափագն է, որ մենք էլ Նոբելեան մրցանակակիր հայեր ունենանք գրականութեան անդաստանում եւ այլ բնագաւառներում, որին հասնելը պետական հովանաւորութիւն եւ հոգատարութիւն է պահանջում:

Ներկաներից թւով 16 գրողներ ըստ հետեւեալի ամբիոն ներկայացան եւ կարդացին իրենց գործերից.

Արշամ Ղազարեան կարդաց բանաստեղծութիւններ:

Ազնէս Գէորգեան կարդաց արձակ մանրապատումներ:

Պօղոս Գուլպէլեան խօսեց դէպի Հայաստան ճամբորդութեան եւ իր տղայի ամուսնութեան պսակադրութեան մասին Սեւանայ կղզու եկեղեցում, նաեւ խօսեց իր գրքի մասին:

Խորէն Արամունին կարդաց իր երգիծական ակնարկը Հայաստանում օտարալեզու դպրոցների

եւ լատինատառ գովազդների տեղադրութեան կապակցութեամբ: Այդ դպրոցները ապագային սերմեր են ցանելու հայրենիքում եւ վնասաբեր գործունէութիւն են ծաւալելու:

Վարսիկ Յակոբեան կարդաց արձակ մանրապատումներ:

Սահակ Թութճեան իր գրքից ընթերցեց դէպի Հայաստան ճամբորդական նկարագրութեան մի հատուած:

Նեկտար Գարունին կարդաց բանաստեղծութիւններ:

Զանիբեկ Զանիբեկեան կարդաց իր ինքնատիպ ու ինքնուրոյն «Գրական քթոցից» գիւղահամ փունջ էսքիզներ: Նա մեծապէս գնահատեց ներկաների կողմից: Զանիբեկը իր խառնածքով, նկարագրով եւ գրականութեամբ յարգւած ու սիրւած անձնաւորութիւն է իր տասի հասնող գրքերի հրատարակութեամբ:

Կիմա Կիրակոսեան կարդաց պատմուածք:

Անդրանիկ Մկրտչեան կարդաց բանաստեղծութիւններ:

Արմէն Պօղոսեան Զանիբեկին ձօնած իր կարճ ու գողտրիկ բանաստեղծութիւններով ելոյթ ունեցաւ:

Սեդա Ադամեան կարդաց բանաստեղծութիւններ:

Պօղոս Լազարեանը ներկայացրեց իր գրախօսականը ձօնած Գ. Քրիստինեանի «Յորեն պապը» պոէմի առիթով:

Հայկուհի Բաղալեան կարդաց բանաստեղծութիւններ:

Երևանդ Իսկանդարեանը կարդաց քառեակներ:

Վազգէն Աբովեան մտահոգութիւն յայտնեց հեռուստատեսային խաչատուակ կինօ ժապաւէնների յոռի դաստիարակչական ազդեցութեան շուրջ:

Ժամանակի սղութեան պատճառով ցանկը մնաց կիսաւարտ: Խանդավառ եւ հետաքրքրական երեկոյ էր, որը լաւ տպաւորութիւն թողեց ներկաների վրայ: Յանկանք հոծ թւով ներկայութիւն օգտուելու գրականութեան բարիքներից, առանց գրականութեան կեանքը կը կնճռոտի, գրականութիւնը ոգու եւ մտքի մտուղ է՝ կեանքի գեղեցկացում:

## ՎԱՐՁՈՒ ՏՈՒՆ

PALM SPRINGS ԱՐՉԱԿՈՒՐԴԻ ԳԱՅՈՂ  
ՀԱՅՐԵՆԱԿԻՑՆԵՐԻ ՈՒՇԱԴՐՈՒԹԵԱՆ

Փալմ Սփրինգս գեղատեսիլ եւ կից լեռնային շրջանին, վարձու է տրուում լրիւ կահաւորուած մէկ ննջարան, մեծ նստասենեակ, խոհանոց՝ բոլոր յարմարութիւններով, մինչեւ 5-6 հոգի գիշերելու տարողութեամբ Condo: Ունի մեծ լողաւազան, ջաքուզի, թենիսի խաղադաշտ, կանաչազարդ փիքնիքի տարածք, իր յատուկ կրակարաններով եւ 24-ժամեայ ապահովութեան սիստեմ:

Մանրամասների համար հեռաձայնել՝  
(818) 246-0125

Վարձման գներն են՝	
Ուրբաթ, Շաբաթ եւ Կիրակի՝	\$ 400
Long Weekend-ների համար՝	\$ 500
Մէկ շաբաթուայ համար՝	\$ 675
Մէկ ամսուայ համար՝	\$ 1450

Կազմակերպութեամբ Organized By

ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹԵԱՆ  
NOR SEROUNT CULTURAL ASSOCIATION




ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ ՕՐՈՒԱՅ

# ԱՆՂԱՄՈՒՆ

SUNDAY SEPTEMBER 26, 2010  
VERDUGO PARK, GLENDALE



ԵՐԳ . ՊԱՐ . ԱՌԻԵՍԻ ԳՈՐԾԵՐՈՒ ԵՒ ԳԻՐԵՐՈՒ ՎԱԿԱՐԸ . ՓՈՐՐԵՐՈՒ ԽԱՂԵՐ . ՀԱՄԱԴԱՄ ԿԱՇԵՐ



To reserve your booth

please call Nor Serount Cultural Association

Ձեր կրպակները ապահովելու համար

Հեռաձայնեցեք Նոր Սերունդ Մշակութային Միության

**(818) 391-7938**